

# ՄԵՐ ԽՕՍՔԸ

## ԿԱՌՉԻԼ ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԻՆ


Աւելի քան 20 տարիներ անցած են Հայաստանի Հանրապետության անկախացումէն, սակայն հայրենիքի իրերայաջորդ իշխանութիւններ չեն կրցած ապահովել ժողովուրդին համար բարօր կեանք մը ու հաստատել ընկերային արդարութիւն: Այս կացութիւնը առաջնորդած է արտագաղթի՝ կեանքի աւելի լաւ պայմաններ գտնելու նպատակով:

Մտահոգիչ է իշխանութեան եւ անոր արտաքին դիւանագիտութեան կողմէ այս նիւթը արծարծելէ ու այս մասին խօսելէ եղած խուսափողականութիւնը: Երեւոյթ մը, որ անպայման կասկածի տակ կը դնէ հարցերուն լուծում ապահովելու իշխանաւորներուն մտադրութիւնն ու պատրաստակամութիւնը, հակառակ անոր որ երկիրը պարպելու վտանգին դէմ յանդիման կանգնեցնող եւ անյետաձգելի հարց է արտագաղթը, զոր կարելի չէ անտեսել կամ անգիտակալ: Երկրի տնտեսական համակարգը եւ անոր իբրեւ հետեւանք հարստութիւններու մեծամասնութիւնը ժողովուրդի քանի մը առ հարիւրին մօտ տեղակայումը թոյլ չեն տար, որ ժողովուրդը գերազգային հարց նկատէ ազգային մտածողութիւնը ու հայրենիքի մէջ ապրիլն ու գործելը: Կաշառակերութեան ու մենաշնորհումներու դէմ պայքարի համար օրէնքներու մշակումը եւ միջին ու փոքր հաստատութիւններու նախաձեռնութեան քաջալերանքը պիտի ապահովեն յաւելեալ գործի առիթներ ու նուազեցնեն արտագաղթողներուն թիւը: Անհրաժեշտ է, որ Հայաստանի Հանրապետության դեսպանատուները մնայուն յարաբերութեան մէջ մնան իւրաքանչիւր քաղաքացիի եւ իրենց երկիրներու համայնքներուն հետ:

Ստեղծուած այս պայմաններուն լոյսին տակ ու Արեւմտահայաստանի բռնագրաւման շարունակութեամբ կ'ուշանայ տարագիր ու աշխարհասփիւռ հայութեան համախմբումը ամբողջական Հայաստանի հողին վրայ: Երկքաղաքացիութեան օրէնքը իր էութեամբ դրական գործօն պէտք է նկատել սփիւռքահայը կապելու մայր հայրենիքին եւ զայն իրազեկ դարձնելու հոն տիրող իրականութեան: Այս գծով հարկ է լիբանանահայութեան լիակատար մասնակցութիւնը այս գործընթացին:

Եթէ ազատագրուած Արեւմտահայաստան հայրենադարձութիւնը այսօրուան դրութեամբ պարզապէս իտելապաշտութեան օրինակ մըն է, սակայն ան մեր մտքերուն ու աշխատանքին մէջ ուղեցոյց պէտք է դառնայ՝ հանգրուանային երկարաժամկետ ծրագիր մը ներառելով: Իսկ եթէ կազմակերպուած սփիւռքներ ունենալը այսօր առաջադրանք է ու իր էութեամբ հայ ժողովուրդին յատուկ է՝ պատմութեան այս ժամանակաշրջանին, բայց եւ այնպէս պէտք է գիտակցիլ ու բացատրել նաեւ անոր ժամանակաւոր լինելիութեան մասին: Մեր նպատակներու եւ տեսլականներու մէկ հիմնական մասն է, որ կ'արտացոլայ այս կետին մէջ:

«Ռազմիկ»-ի այս թիւը կու գայ հանրութեան եւ յատկապէս երիտասարդութեան ուշադրութեան յանձնելու հայրենիքէն արտագաղթին պատճառով ստեղծուած ճակատագրական կացութիւնն ու տակաւին առկայ մարտահրաւերները, բայց միւս կողմէն շեշտելու հայրենադարձութեան մտային ենթահող ու հիմնաւորումներ պատրաստելու եւ ապահովելու կարեւորութիւնը:





**«ԱՐՏԱԳԱՂԹԻ  
ՊԱՏՃԱՌՆԵՐԸ  
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԲԱԶՄԱԶԱՆ  
ԵՆ՝ ՔԱՂԱՔԱԿԱՆ,  
ՏՆՏԵՍԱԿԱՆ, ԸՆԿԵՐԱՅԻՆ,  
ԻՐԱՒԱԿԱՆ ՀԻՄՔԵՐՈՎ»**

**«ՌԱԶՄԻԿ»-ԻՆ Կ'ԸՍԵ  
ԼԻԼԻԹ ԳՎԼՍՏԵԱՆ**



Հայաստանէն արտագաղթի մասին աւելի յստակ ու հաւաստի տեղեկութիւններ առնելու նպատակով՝ «Ռազմիկ» դիմեց Հայաստանի Ազգային ժողովի ՀՀԴ խմբակցութեան պատգամաւոր Լիլիթ Գալստեանի, որ Հայաստանի ընկերային, մշակութային կեանքով միշտ մտահոգ եղած է: Արտագաղթին տարբեր պատճառներուն, այս գծով գոյութիւն ունեցող թիւերուն ու տուեալներուն մասին խօսելով՝ Լ. Գալստեան վերահաստատեց իր մտահոգութիւնը՝ այս առնչութեամբ կառավարութեան անլուրջ վերաբերումին նկատմամբ: Ան նաեւ անդրադարձաւ Դաշնակցութեան տեսակետին՝ յայտնելով, որ ՀՀԴ-ն կը ձգտի ժողովրդավար եւ ընկերային արդարութեամբ ապրող ու գործող Հայաստան մը ունենալ: Ստորեւ՝ հարցազրոյցին ամբողջութիւնը:

*«ՌԱԶՄԻԿ».- Այսօր աւելի քան երբեք կը խօսուի Հայաստանէն արտագաղթի ժխտական երեւոյթին եւ անոր առնչուած վտանգներուն մասին: Ինչ է ձեր մօտեցումը, ինչպէ՞ս կը պարզաբանեք զայն, ինչի՞ հետեւանք է:*

**Լիլիթ Գալստեան.-** Կարծում եմ, արտագաղթը երեւոյթ է, որն ի յայտ է գալիս տնտեսական, քաղաքական եւ իրաւական գործօնների ազդեցութեամբ: Անկախացումից յետոյ Հայաստանի Հանրապետութեան բնակչութեան տեղաշարժերն այնպիսի չափերի հասան ու ընդունեցին այնպիսի ձեւեր, որ սկսեցին բացասաբար ազդել երկրի ո՛չ միայն ընկերային-տնտեսական իրավիճակին վրայ, այլ նաեւ յանգեցրին բարոյահոգեբանական մթնոլորտի վատթարացման, պետութեան կողմից բաւարար ընկերային ապահովութեան պահպանման անկարողութեան, ժողովրդագրական իրավիճակի անկման՝ այսպիսով սպառնալով նաեւ ազգային անվտանգութեանը:

Հայաստանն այսօր էլ բախուում է արտագաղթի իրականութեանը, որն ինքնին խախտում է երկրի ժողովրդագրական պատկերին եւ չի նպաստում Հայաստանի զարգացմանը: Անկախութեան 20 տարիների հեռաւորութիւնից նայելիս, ակամայից յանգում ես այն եզրակացութեանը, որ այսօր էլ արդիական են այն նոյն տնտեսական, քաղաքական եւ իրաւական գործօնները, որոնցով պայմանաւորուած էին 90-ականներին սկիզբ առած արտագաղթի հոսքերը: Այս է պատճառը, որ արտագաղթը կարելի է որակել, որպէս ներկայիս Հայաստանի առաւել իրատապ եւ ցաւազին ընկերային-ժողովրդագրական մարտահրաւեր:

*«Ռ.»- Պետությունը կը քննարկէ՞ այս հարցը. Ան ընդհանուր առմամբ ի՞նչ ծրագիր ունի կանխելու համար այս երեւոյթը:*

Լ. Գ.- Ինչպէս շատ ոլորտներում, այս ոլորտում էլ պետությունը յայտարարում է իր ջանքերի եւ ծրագրերի մասին, բայց իրականությունն, այնուամենայնիւ, այն է, որ արտագաղթի ալիքը չի մեղմանում եւ ի թիւս ընկերային այլ պատճառների, հիմնական պատճառը մնում է ընկերային անարդարությունը: Գոյություն ունի Յայաստանի Յանրապետութեան Միգրացիայի (արտագաղթի) պետական կարգաւորման հայեցակարգ, որտեղ սահմանում են արտագաղթի բնագաւառում պետական քաղաքականութեան սկզբունքները, այդ թւում նաեւ արտագաղթի ծաւալների կրճատման ուղղութեամբ վարուելիք հիմնական քաղաքականությունը: Բայց թէ որքանով են անկեղծ պետութեան այդ քայլերը, կարելի չէ ըսել. արդարեւ, արտագաղթի չափերը օրեցօր ահագնանում են, իսկ միջազգային տարբեր կազմակերպությունների կատարած ուսումնասիրություններն ու կանխատեսումները ոչ մի լաւ բան չեն խոստանում:

*«Ռ.»- Ինչ թիւերու մասին կրնանք խօսիլ, արտագաղթող երիտասարդութեան տոկոսը որքա՞ն է:*

Լ. Գ.- Յամաձայն պաշտօնական տեղեկատուութեան, 2011 թուականի ընթացքում Յայաստանի Յանրապետութիւնից հեռացել է շուրջ 40-45 հազար մարդ, ընդ որում ԱՊՅ երկրիների արտագաղթի միտումների ուսումնասիրությունը բացայայտում է, որ նախկին Խորհրդային հանրապետութիւնների շարքում երկիրը մշտապէս լքելու ամենամեծ ցանկութիւն Յայաստանի Յանրապետութեան քաղաքացիներն ունեն բնակչութեան մօտ կէսը՝ 44 առ հարիւրը: Փաստօրէն, վերածուել ենք որակեալ աշխատուժ արտահանող երկրի. արտագաղթողների 65 առ հարիւրը 18-55 տարեկան աշխուժ աշխատուժ հանդիսացող տղամարդիկ են, որոնց 35 առ հարիւրը՝ մասնագիտական կամ բարձրագոյն կրթութեամբ: Ըստ ՄԱԿ-ի մարդկային զարգացման տարեկան զեկոյցին, մօտ ապագայում արտագաղթողների թիւը կը հասնի 200 հազարի: 1990 թ. համեմատ ազգի վերարտադրողականութիւնը 82.4 առ հարիւրից այսօր հասել է 54 առ հարիւրի, զարգացման նման շարունակութեան դէպքում 2040 թուականին մերձակայքում Յայաստանի ազգաբնակչութիւնը կը նուազի՝ հասնելով 1.5 միլիոնի:

Վերոնշեալ թուերից կարելի է եզրակացնել, որ արտագաղթողների շարքում զգալի թիւ են կազմում հէնց երիտասարդները, որոնք ինքնաիրացման հնարաւորութիւնների որոնումներով, հայրենիքում իրենց ապագայի տեսլականը չունենալով, լքում են մեր երկիրը:

*«Ռ.»- Արտագաղթի պատճառները ի՞նչ են ձեր կարծիքով: Արդեօք ապահովակա՞ն պատճառները են, կամ ժողովրդավարութեան պակասը որոշ ազդեցութիւն ունի:*

Լ. Գ.- Արտագաղթի պատճառները Յայաստանում բազմազան են. ինչպէս արդէն նշեցի դրանք ունեն քաղաքական, տնտեսական եւ իրաւական հիմքեր: Անկայուն, անարդարութիւններով լի մեր իրականութեան մէջ, երբ հասարակութեան մեծագոյն մասը վաղուայ օրուայ հեռանկարը չի տեսնում, համոզում չունի իր իրաւունքների պաշտպանութեան մէջ կամ պարզապէս անկարող է օրուայ հացի խնդիրը լուծել, արտագաղթը դարձել է օրինաչափ երեւոյթ: Մարդիկ պարզապէս չգիմանալով ամենաթողութեամբ, անտարբերութեամբ եւ անպատժելիութեամբ լի այս իրականութեանը՝ դիմում են արտագաղթի:

*«Ռ.»- Յայրենադարձութեան երեւոյթը ի՞նչ է Յայաստանի կառավարութեան համար, իսկ դուք ինչպէ՞ս կը դիտէք այս երեւոյթը, ի՞նչ է ձեր կարծիքը:*

Լ. Գ.- Յայաստանն իր յայտարարուած ճշմարտութիւններով ու ծրագրերով բոլորովին այլ երես ունի, իրականութիւնը, սակայն, բոլորովին այլ է: Ընդունուել է «Յայրենադարձութեան մասին» հայեցակարգ, նաեւ շրջանառութեան մէջ է դրում «Յայրենադարձութեան մասին» Յայաստանի օրէնք, բայց մինչեւ մեր հայրենակիցներին Յայաստան հրաւիրելը նախ եւ առաջ



մեր պետութեան, մեր կառավարութեան ջանքերը պետք է ուղղուած լինեն Հայաստան երկրի կառուցելուն. կառուցելու մի երկիր, որտեղ մարդու իրաւունքները պաշտպանուած են, երկիր, որտեղ իսկապէս կայ ժողովրդավարութիւն, երկիր, որտեղ կայ տնտեսական գործունէութեան ազատութիւն, որտեղ չկայ աղքատութիւն, որն այսօր արդէն իսկ 46 տոկոսի շրջանակներում է: Եւ կարծում եմ՝ այսպիսի երկրում հայրենադարձութեան մասին մտածելը, կեղծ պատրանքների շարքից է:



*«Ռ.».- Ինչ են Հայ յեղափոխութեան դաշնակցութեան խմբակցութեան առաջարկած կէտերը այս կապակցութեամբ, որպէսզի քաջալերուի Հայաստան հաստատուելու մտադիր սփիւռքահայը յատկապէս:*

Լ. Գ.- ՀՀ Դաշնակցութեան տեսակետը մէկն է. կառուցել ժողովրդավարական երկիր, կառուցել ընկերային արդարութեան երկիր, արդիւնաւետ կառավարողի երկիր, երկիր որտեղ յարգուած են մարդու իրաւունքները, մարդկանց սեփականութեան իրաւունքը պաշտպանուած է, որտեղ պարզապէս պաշտպանուած են մարդու հիմնական ազատութիւններն ու իրաւունքները, ինչպէս յայտարարուած է Սահմանադրութեան մէջ, որպէսզի մենք գայթակղութիւն չունենանք հրաւիրել Սփիւռքից մեր հայրենակիցներին, եւ չկարողանանք պաշտպանել նրանց իրաւունքները:

Մեր տեսակետը մէկն է. պարզապէս օրէնքներով կամ հայեցակարգերով հնարաւոր չէ աշխատել, որովհետեւ դրանք այլ պատկեր ունեն, իսկ իրականութիւնը՝ բոլորովին այլ: Դաշնակցութիւնն ունի երկրի իր մոտելը եւ իր տեսլականը, եւ կարծում եմ՝ այն ժամանակ, երբ որ մենք կը կարողանանք կառուցել արժանապատիւ պետութիւն՝ հիմնուած ընկերային արդարութեան ու հաւասար իրաւունքների վրայ, այդ դէպքում միայն Սփիւռքի մեր հայրենակիցը Հայաստանում հաստատուելու հրապոյրը կ'ունենայ: Եւ կարծում եմ նաեւ, որ այս խնդիրը չի կարելի միայն զգացական դաշտի վրայ դնել:

*«Ռ.».- Հայաստանի եւ Լիբանանի միջպետական յարաբերութիւնները յաւելեալ թարմութիւն ապրեցան Լիբանանի նախագահին Հայաստան տուած այցելութենէն ետք: Ի՞նչ են ապագայի աշխատանքները (կրթական մարզէն դուրս): Ո՞ր մարզերուն մէջ կարելի է միջպետական յարաբերութիւն հաստատել:*

Լ. Գ.- Ընդհանրապէս դրական եմ գնահատում Հայաստան-սփիւռք Դաշնակցութեան գործակցութեան ծրագրերը: Հայկական սփիւռքը հրաշալի ներուժ ունի, մենք պիտի կարողանանք մեր ներուժը օգտագործել՝ իսկապէս բարեկեցիկ, արժանապատիւ, սիրելի հայրենիք կառուցելու, միւս կողմից Սփիւռքի զարկերը կենսունակ պահելու համար:

# ԱՐՏԱԳԱՂԹԻ ԵՐԵՒՈՅԹԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ

Իր անկախության 20 տարիներէն ետք  
ներկայ Հայաստանը տակաւին դեմ  
յանդիման է տարբեր տեսակի մարտա-  
հրաւերներու: Անգործության եւ աղքատու-  
թեան կողքին, ինչպէս նաեւ ժողովուրդի  
կարգ մը իրաւունքներու բռնաբարման զու-

գահեռ՝ ար-  
տ ա գ ա դ թ ը  
մեծ ու վտան-  
գաւոր տեղ կը  
գրաւէ Հայաս-  
տանի դիմագ-  
րաւած դժուար-  
ութիւններու  
ցանկին վրայ  
այնքան, որ կը  
նկատուի ազ-  
գային աղետ:  
Անկախ այն  
իրողութենէն,  
որ Հայաստա-  
նի կառավար-  
ութիւնը ընդ-  
հանրապէս կը  
փորձէ հերքել  
այս երեւոյթը՝

զայն լուսանցքի վրայ ձգել, անտեսել ձեւա-  
նալ, բայց եւ այնպէս կան յստակ ուսումնա-  
սիրութիւններ, որոնց արդիւնքները վտան-  
գաւոր պատկերներ կը պարզեն:

Նախկին Խորհրդային միութեան փլու-  
զումէն ետք Հայաստանի բնակչութեան  
թիւը հետզհետէ նուազած է. 1991-էն  
սկսեալ 700 հազարէն մինչեւ 1 միլիոն 300  
հազար հայեր լքած են Հայաստանը՝ այս  
կամ այն պատճառով: Այս երեւոյթին զուգա-  
հեռ, կառավարութիւնը ո՛չ մէկ ճիգ կը թափէ  
արտագաղթին տարողութիւնը նուազեցնե-  
լու համար, այլ կը բաւարարուի մերժելով  
այս երեւոյթը: Գաղթողները մեծամասնու-

թեամբ տղամարդիկ են, երիտասարդներ,  
որոնք անգործ են եւ իրենց ընտանիքներուն  
ապրուստը հոգալու միակ ձեւը Ռուսիա  
ուղղուիլ եւ աշխատանք մը գտնելն է: Կա-  
ռավարութիւնը ցարդ կը մնայ դիտորդի դե-  
րակատարութեան մէջ: Արդեօք ժամանակը

չէ՞ հասած, որ  
ան ձեռնածալ  
վ ի ճ ա կ է ն  
դուրս գալով  
քայլերու դի-  
մէ, համապա-  
տ ա ս խ ա ն  
ծրագիրներ  
մշակէ, որ-  
պէսզի կարե-  
նայ գործեր  
ա պ ա հ ո վ է լ  
երիտասար-  
դութեան ու  
զանոնք պա-  
հել իրենց հո-  
ղին վրայ: Այս  
հարցը խոր-  
քին մէջ ազ-  
գային հարց է



եւ եթէ առաջըը չառնուի, շատ վտանգաւոր  
հետեւանքներ կրնայ ունենալ: Այն տղա-  
մարդիկը, որոնք Ռուսիա կամ ուրիշ այլ եր-  
կիր կը գաղթեն, յաճախ Հայաստանի մէջ  
ձգած իրենց ընտանիքն ու զաւակները երկ-  
րորդական նկատելով՝ նոր ընտանիքներ կը  
կազմեն, երբեմն ամբողջովին մոռնալով  
Հայաստանի իրենց հարազատները: Այս մե-  
կը կը ջլատէ հայ ընտանիքը եւ աննախա-  
տեսելի կացութիւններ կը ստեղծէ: Կառա-  
վարութիւնը լաւապէս կը գիտակցի այս վի-  
ճակին, սակայն կը մնայ խուսափողական:  
Հայաստանի մէջ հասարակական եւ ընկե-  
րային բազմաթիւ հարցեր կան: Կայ նաեւ  
ուրիշ հարց մը. այն տղամարդիկը, որոնք



### ԱՐՏԱԳԱՂԹ

#### Ճգնաժամեն փախուստ տալու լաւագոյն ելքը՝ «Չուարթնոց» օդակայան

զաղթած են, երբ վերադառնան, իրենց կիներուն կը փոխանցեն տարբեր տեսակի հիւանդութիւններ, որոնց կարգին՝ սիտա: Ի՞նչ է կառավարութեան մօտեցումը այս գծով: Ան նստած է հանգիստ ու ոչ մէկ գործ կը կատարէ ժողովուրդի բարօրութեան համար: Ասոր զուգահեռ ընդդիմադիր կուսակցութիւնները, որոնց կարգին Յայ յեղափոխական դաշնակցութիւնը, կը բողոքեն այս երեւոյթին դէմ եւ կառավարութենէն կը պահանջեն աշխատանք տանիլ այս առնչութեամբ:

Արտագաղթը ունի նաեւ շատ վտանգաւոր այլ հետեւանք մը՝ ծնելիութեան միջին տոկոսի նուազումը, տղամարդիկ ընդհանրապէս երկրէն դուրս են, տարին քանի մը անգամ կու գան եւ կրկին կը վերադառնան իրենց աշխատանքներուն: Այս պատճառով ալ ծնունդներուն թիւը զգալի նահանջ արձանագրած է: Կայ նաեւ անելի՛ն. Յայաստանի մէջ պիտի գոյանայ աղջիկներու սերունդ մը, որ պիտի չունենայ ամուսնանալու առիթ՝ պարզ այն պատճառով, որ տղամարդիկ կը լքեն երկիրը: Շատ վտանգաւոր պի-

տի ըլլայ նաեւ այս հարցին հետեւանքը, որովհետեւ բնակչութեան թիւը պիտի նուազի: Այս կը նշանակէ, որ Յայաստանի բնակչութեան միւս մասն ալ երկրէն դուրս ելլելու մասին պիտի սկսի մտածել: Ո՞ր է կառավարութեան դերը այս հարցին մէջ: Յայաստանի կառավարութեան դերը աշխատանքի յաւելեալ առիթներ ստեղծելու մասին մտածելն ու այս առնչութեամբ գործելն է: Ան պետք է իր ժողովուրդին գործ հայթայթէ, օգնէ անոր, իրաւունքները չբռնաբարէ, չանտեսէ անոր պահանջները:

Կառավարութիւնը պետք է իր ժողովուրդին կարծիքը առէ, մտահոգութիւնները գիտնայ, ապա քայլերու դիմէ եւ որոշումներ տայ, երկրին մէջ բարեկարգումներ ընելը պետք է ամեն բանէ վեր նկատուի, որպէսզի այս ժողովուրդը, փոխանակ արտագաղթելու, մնայ Յայաստանի մէջ եւ ուրախ կեանք մը ապրի:

Եւ վերջապէս, այս իմաստով ի՞նչ է դերը մեր՝ սփիւռքահայերու: «Դեպի Երկիր» կարգախօսը շատ բան կ'ըսէ, պետք է առաւել եւս կառչիլ անոր: Կոչ կ'ուղղենք յատկապէս երիտասարդութեան, ուսանողութեան, որ վերադառնան հայրենիք, ծառայեն հայ ժողովուրդին, գործ ստեղծեն Յայաստանի մէջ: Մեր վերջնական հանգրուանը Յայաստանն է: Մեր ուժերը հաւաքենք ու ուղղենք միմիայն դեպի Յայաստան, որպէսզի ծաղկեցնենք մեր երկիրը մինչեւ որ հասնիք մեր գերագոյն նպատակին՝ ազատ, անկախ ու միացեալ Յայաստանին:

**Ս. Թ.**


*ԼԵՄ-ի «Յրայր Դժոխք» մասնաճիւղ*

# ԱՅԱՉԱՆԳԸ ՀՆՉԱԾ Է, ԿԸ ՄՆԱՅ ԱԿԱՆՋ ՏԱԼ

19-20 սեպտեմբեր 2011-ին Հայաստանի մեջ կայացած Համահայկական Գ. համաժողովին ընթացքին, Հայաստանի եւ ընդհանրապես հայութեան վերաբերող տարբեր հարցերու գծով մտահոգութիւններ առաջադրելու կողքին, Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոս ըսաւ. «Մեր հայեցո-

ւմեր հասարակական կառոյցներուն ու հայրենաբնակ ժողովուրդի զաւակներուն մօտ: Մեր թշնամին ուզեց Հայաստան մը՝ առանց հայութեան: Այսօր մենք մե՛ր ձեռքերով կը պարպենք Հայաստանը իր ժողովուրդէն, իր ստեղծագործ ոգիէն, իր որակէն: Այս տագնապին ետին գտնուող ընկե-

րային եւ տնտեսական պատճառներուն ազդու լուծումներ որոնելը անյետաձգելի անհրաժեշտութիւն է՝ առաջը առնելու համար մեր ազգի այս ներքին արիւնահոսութեան: Իսկ փտածութեան, կորուպցիա կոչուող հիւանդութեան արագատյր ընթացքը, այլ խօսքով՝ փոքրամասնութեան մը տնտեսական յղփացած վիճակը եւ անոր դիմաց մտաւորականներուն, գրողներուն, ուսուցիչներուն ու ընդհանրապես մեր ժողովուրդին կենցաղային խեղճ պայմանները անհրաժեշտ



ղութեամբ, ազգին մեծագոյն տագնապ այն փաստացի իրողութիւնն է, որ Հայաստանէն արտագաղթը նո՛յն թափով կը շարունակուի: Այս մասին մեր մտահոգութիւնը յայտնած էինք Հայաստան-սփիւռք Բ. համաժողովին. նո՛յնը կը կրկնենք առաւել ուժգնութեամբ ու խոր ցաւով: Կը սպասենք, որ այս ահագանգը արձագանգէ Հայաստանի իշխանութեան, մտաւորականութեան,

է, որ շուտով հիմնական բարեփոխութեան ենթարկուին՝ բարոյական արժեքներու, օրինական սկզբունքներու եւ ընկերային հաւասարութեան չափանիշերու ամբողջական կիրառումով: Եկեղեցին չի կրնար անտարբեր մնալ այս վատառողջ երեւոյթներուն դիմաց»:

Հայաստանի պետական եւ կրօնական բարձրաստիճան անձնաւորութիւններու



Ներկայութեամբ Արամ Ա. կաթողիկոսին այս խօսքը բաւական ցնցող եղաւ: Օրին եւ յաջորդող օրերուն, հայաստանեան լրատուամիջոցները անդրադարձան այն երեւոյթին, որ միայն գովասանք եւ փառաբանութիւն լսելու եկած իշխանաւորներն ու հոգեւորականները անակնկալի եկան՝ լսելով Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսին խօսքը: Փաստօրէն, ան մատը դրաւ այն վերջին վրայ, զոր անոնք միշտ կը փորձեն լուսարձակներէ հեռու պահել կամ անոր արիւնահոսութիւնը ժամանակաւոր կերպով կասեցնել՝ առանց հիմնական բուժման մասին մտածելու:

Հայաստանի Հանրապետութեան ազգային վիճակագրական ծառայութեան վերջին մարդահամարին տուեալներով, 1980-ական թուականներէն ի վեր, առաջին անգամ ըլլալով, երկրի բնակչութեան թուաքանակը երեք միլիոնի սահմանէն վար՝ 2.8 միլիոնի իջած է:

Միացեալ ազգերու կազմակերպութեան զարգացման ծրագրի 2010-ի տեղեկագրի տուեալներով, 1991-2010-ին Հայաստանը անվերադարձ լքած է 700 հազարէն մինչեւ մէկ միլիոն քաղաքացի, որուն մօտաւորապէս կէսը հայրենիքէն ընդմիշտ հեռացած է ՀՀ-ական իշխանութիւններու օրով: Այս ցուցանիշներով ի յայտ կու գայ ցնցիչ պատկեր մը, թէ՛ երկրի բնակչութեան գրեթէ մէկ երրորդը արդէն չկայ...

Այս թիւերն ու տուեալները բնականաբար Հայաստանի իշխանաւորներուն համար եւս յստակ են, սակայն հակառակ ահազանգային վիճակին, անոնք չեն ուզեր իրականութեան դէմ յանդիման կանգնիլ եւ խոստովանիլ, որ պէտք է դուրս գալ անհատական շահեր հետապնդելէ ու լծուիլ հաւաքական, ազգային կարեւորութիւն ունեցող հարցերու լուծման:

Այսօր տնտեսական ճգնաժամը, աղքատութիւնը, անգործութիւնը, ցած կենսամակարդակը եւ ընկերային անարդարութեան տարբեր տեսակի դրսեւորումներ յաւելեալ թափ կու տան հայրենալքման: Առաւել վտանգաւոր է այն, որ արտագաղթողներուն կարգին հիմնական տեղ կը գրաւեն հայրենիքի սահմանները պաշտպանող հիասթափուած հայ գիւղացիները, երիտասարդ ուսանողներն ու բարձրագոյն կրթութեան տեր մասնագետները, որոնք կրնային մեր երկրին մէջ մեծ ներդրում ունենալ:



Բնականաբար, Հայաստանի քաղաքացին եւս պատասխանատու է այս վտանգաւոր կացութեան, որովհետեւ ան աւելի դիրին ճամբան կը բռնէ, բայց եւ այնպէս եթէ անոնց մէկ փոքր համեմատութիւնը առաջին դժուարութեան դիմաց կը լքէ երկիրը, ապա կան շատեր, որոնք զանազան փորձերէ ետք դիմած են այս քայլին:

Բնականաբար, Հայաստանի քաղաքացին եւս պատասխանատու է այս վտանգաւոր կացութեան, որովհետեւ ան աւելի դիրին ճամբան կը բռնէ, բայց եւ այնպէս եթէ անոնց մէկ փոքր համեմատութիւնը առաջին դժուարութեան դիմաց կը լքէ երկիրը, ապա կան շատեր, որոնք զանազան փորձերէ ետք դիմած են այս քայլին:

Կացութիւնը ո՛չ միայն ընկերային տագնապալի վիճակ կը ստեղծէ, այլ ապահովական եւ ազգային մեծ մարտահրաւեր է, որուն դիմաց պարտութեան պարագային շատ դիւրութեամբ կրնանք պարտուիլ թշնամիին կողմէ որեւէ փոքր յարձակումի դիմաց եւս:

Ահազանգը բաւական բարձր կը հնչէ ամենօրեայ դրութեամբ, սակայն պէտք է ականջ տուող ըլլայ, որպէսզի կարելի ըլլայ լաւապէս սերտել կացութիւնը եւ համապատասխան վճռական ու արմատական լուծումներու մասին մտածել, այլապէս ապագան մշուշապատ ու շատ անորոշ կը թուի ըլլալ:

**Հ. Ա.**

*ԼԵՄ-ի «Րաֆֆի» մասնաճիղ*




«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՉ  
ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ԿԱՄԱԻՈՐ  
ԱՇԽԱՏԱՆՔԸ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆ  
Է, ԵՒ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ՀԱՅ  
ԵՐԻՏԱՍԱՐԴ ՊԵՏՔ Է ԱՆՑՆԻ  
ԱՅԴ ՀԱՆԳՐՈՒԱՆԷՆ»,

«ՌԱԶՄԻԿ»-ԻՆ Կ'ԸՍԷ  
ՍԵՒԱՆ ԳԱՊԱԳԵԱՆ




2004 թուականին ի վեր գործող «Դեպի Հայք» կազմակերպության նպատակն է սփիւռքահայ երիտասարդներուն տալ իրենց հայրենի հողին վրայ ապրելու եւ կամաւորական աշխատանք տանելու փորձառութեան եւ գոհունակութեան առիթ: Գործադիր տնօրէն՝ Սեւան Գապագեան վերջերս կը գտնուէր Լիբանան՝ այս ծրագիրին մասին յաւելեալ տեղեկութիւններ փոխանցելու լիբանանահայ երիտասարդութեան: Ան կը հաւատայ, որ կամաւոր աշխատանքով Հայաստանի մէջ գտնուիլը տարբեր է զբօսաշրջիկային տրամադրութեամբ հայրենիք գալէ, որովհետեւ հոն երկար մնալով է, որ կը զգաս հողէն բխող ուժը, որ քեզի կրկին կը հրաւիրէ: Այս իւրայատուկ կազմակերպութեան եւ անոր աշխատանքներուն մասին յաւելեալ տեղեկութիւններ քաղելու նպատակով «Ռազմիկ» հետեւեալ հարցազրոյցը ունեցաւ Սեւան Գապագեանի հետ:



«ՌԱԶՄԻԿ».- Ե՞րբ հիմնադրուեցաւ «Դեպի Հայք» (Birthright Armenia) կազմակերպութիւնը եւ ի՞նչ նպատակով:

ՍԵՒԱՆ ԳԱՊԱԳԵԱՆ.- «Դեպի Հայք»-ը հիմնադրուած է 2004 թուականին: Ան հիմնականօրէն ունի երեք նպատակ: Առաջին՝ առիթ տալ ամեն սփիւռքահայու հասկնալու Հայաստանի ընկերային, մշա-





կութային, տնտեսական ու քաղաքական կեանքը եւ անձամբ ապրելու այդ փորձառութիւնը: Երկրորդ՝ խանդավառել եւ ներշնչել իւրաքանչիւր հայ՝ վերադառնալու դէպի իր արմատները եւ կամ նոյնիսկ հաստատուելու Յայաստան՝ ներգործօն դերակատարութիւն ունենալով ազգակերտման աշխատանքին մէջ: Իսկ երրորդ՝ պատրաստել ապագայի սփիւռքահայ դեկավարութիւն մը, որ աւելի լաւ կ'ըմբռնէ հայրենիքի կարելորութիւնը եւ անոր հետ սփիւռքի ունեցած կապերը:



*«Ռ.».- Խօսի՛նք «Դէպի Հայք» ծրագիրին մասին՝ անդրադառնալով անոր մասնակցելու պայմաններուն:*

Ս. Գ.- «Դէպի Հայք» ծրագիրին կրնան մասնակցիլ բոլոր այն երիտասարդները, որոնք հայ են. այսինքն՝ ունին գոնէ մէկ մեծ հայր կամ մեծ մայր: Երիտասարդը պէտք է ըլլայ 20-32 տարեկան, աւարտած ըլլայ երկրորդական վարժարան, բայց եւ այնպէս ոեւէ անձ, որ ուսման ճշդուած պայմանները չ'ամբողջացներ, մենք ճկունութիւնը ունինք անոր եւս առիթ տալու:

Մեր ծրագիրին առաջին մասը կ'ընդգրկէ թեկնածուին կամաւոր աշխատանքը Յայաստանի որեւէ մարզի մէջ եւ անոր նախասիրութեամբ տարբեր բնագաւառի մէջ՝ ընկերային, տնտեսական, բժշկական, ուսուցչական, կենսոլորտի, քաղաքական եւ այլն: Այս կամաւոր աշխատանքը կը տարուի նուազագոյնը երկու ամսուան եւ առաւելագոյնը մէկ տարուան ժամկետով, կամաւորին փափաքին համաձայն: Մեր կազմակերպութիւնը կը հոգայ անձին ճամբորդական ճանապարհածախսը, Յայաստանի մէջ զայն կը տեղաւորէ հայ ընտանիքի մը հետ՝ հոգալով կեցութեան հիմնական ծախսը: Անջատ բնակարանի մէջ ապրիլ փափաքողը կ'ընէ իր դասաւորումը: Այսպիսով կամաւորը պէտք է ապահովէ իր առօրեայ ծախսերը: Կամաւորը կ'աշխատի շաբաթը 30 ժամ, հինգ օրուան ընթացքին: Կը կազմակերպուին շրջապտոյտներ, արշաւներ, դասախօսութիւններ եւ տարբեր ծրագիրներ: Մեր ծրագիրին

մասնակցելու յատուկ դիմում-նագիրը թեկնածուն կրնայ գտնել մեր կայքէջին վրայ [www.birtherightarmenia.org](http://www.birtherightarmenia.org): Գրեթէ ամէն ինչ կը կատարուի համացանցի միջոցով:



*«Ռ.».- Ծրագիրին մասնակցելէ ետք երիտասարդներուն մօտ ի՞նչ բան փոխուած կը նկատէք:*

Ս. Գ.- Այս ծրագիրին ծիրին մէջ արձանագրուած են տարբեր տեսակի փորձառութիւններ: Օրինակ, մեր կամաւորներէն որոշներ մնայուն կերպով հաստատուած են Յայաստան եւ հոն կ'աշխատին: Ուրիշներ կ'երկարած գէն իրենց կեցութիւնը՝ մեզի

հետ համաձայնեցնել է տըք: Տակաւին կան ոմանք, որոնք հայերէն չէին գիտեր, սկսան հայերէն սորվիլ եւ խօսիլ, իսկ եղած են բազմաթիւ կամաւորներ, որոնք հիմնականօրէն վերաբժեւորած են իրենց հայու ինքնութեան ըմբռնումը, նոյնիսկ երբ եկած են հայահոծ գաղութներէ:



*«Ռ.».- Ծրագրի սկիզբէն մինչեւ օրս ի՞նչ փոփոխութիւններ կատարուած են կազմակերպութեան հարցերու լուծման իմաստով:*

Ս. Գ.- Առօրեայ անմիջական հարցեր միշտ ալ կրնան ըլլալ, մենք միշտ կը փորձենք այս բոլորը հասցնել կատարելագործումի:

Պետք է արձանագրել, որ ներկայիս պայմանները շատ աւելի կատարելագործուած են, քան նախորդ տարիներուն, եւ ուրախ եմ յայտարարելու, որ միշտ դէպի յառաջ կ'երթանք այս իմաստով: Ինչ կը վերաբերի մեծ դժուարութիւններուն եւ հարցերուն, պետք է ըսել, որ նման անլուծելի խնդիրներ չկան: Նիւթական ապահովելը լուրջ եւ մնայուն մարտահրաւեր մըն է, զոր սակայն կը դիմագրաւենք մեծ քաջութեամբ եւ եռանդով: Մարդիկ նիւթական օժանդակութիւն կը տրամադրեն, որովհետեւ կը տեսնեն տարուող աշխատանքին արդիւնքը: Մենք, մեր կարգին, այդ գումարները կը յատկացնենք մեր ծրագիրներուն՝ ի նպաստ կամաւորներու փորձառութեան:

*«Ռ.».- Ի՞նչ խօսք ունիք լիբանանահայ երիտասարդին:*

Ս. Գ.- Պատգամը նոյնն է, անկախ անկէ, որ լիբանանահայ երիտասարդին կամ այլ հայու ուղղուած է խօսքը: Հայաստանի մէջ այս երկարաժամկետ կամաւոր աշխատանքը, որուն բազմիցս անդրադարձած ենք, անհրաժեշտութիւն մըն է, եւ իւրաքանչիւր հայ երիտասարդ պետք է այդ հանգրուանէն անցնի: «Դէպի Հայք»-ը կամաւորութիւն ընելու շատ լաւ առիթ է եւ պետք է մաս կազմէ իւրաքանչիւր երիտասարդի անձնական ծրագրին: Պետք է երիտասարդութիւնը այս իմաստով դաստիարակուի, գիտակցութիւն պետք է սերմանել անոր մօտ, որպէսզի հասկնայ նման մասնակցութեան կարեւորութիւնն ու իմաստը:

Գաղութի ղեկավարութիւնը եւս պետք է ըսելիք ու ընելիք ունենայ, պետք է մղէ երիտասարդները եւ ծրագիրը անպայման ներառէ երիտասարդական գործունեւութեան մէջ, որովհետեւ եթէ պատահականութեան կամ քմահաճոյքի ձգուի նման ծրագրի մը մասնակցութեան պարագան, բաւական ցաւալի իրականութեան դէմ յանդիման կը գտնուինք: Տարբեր երկիրներու մէջ գիտութեան ծառայութիւնը պարտադիր է, այլընտրանք չկայ, թէւ այս մէկը գիտութեան ծառայութիւն չէ, բայց իր կարգին ծառայութիւն է, աւելի՛ն. տարբեր ներշնչում պատճառով առաքելութիւն մըն է: Մեր կազմակերպութեան թերութիւններէն մէկը կը նկատեմ քարոզչութեան պակասը: Թերեւս մեր գրասենեակն ու նախկին կամաւորները պետք է աւելի ներշնչեն ու խանդավառեն իրենց շրջապատը: Մենք՝ իբրեւ կազմակերպութիւնը, մեր վրայ կ'առնենք այս պատասխանատուութիւնը, այդ պատճառով ալ մենք տարբեր երկիրներ այցելութիւններ կու տանք, նաեւ եկանք Լիբանան: Պետք է, որ գաղութի ղեկավարութիւնն ու երիտասարդութիւնը եւս այս գծով աշխատանք տանի:

**Հարցազոյցը վարեց՝  
ՀՐԱԿ ԱՒԵՏԱՆԵԱՆ  
Արտագրեց՝ ՄՅԵՐ Օ.**



# ԱՅԼԵԻՄ ՊԱՆՈՒԻՏԵՆՔ

Մօտաւորապէս հարիւր տարի առաջ տեղի ունեցաւ հայոց պատմութեան ամենէն դժբախտ դէպքը՝ Հայոց ցեղասպանութիւնը, որուն պատճառով կազմուեցաւ հ ա յ կ ա կ ա ն

սփիւռքը: Առաջին օրէն իսկ հայը կառչած մնաց իր ինքնութեան՝ հիմնելով հայկական դպրոցներ, եկեղեցիներ, որոնք իրենց կարգին ծնունդ տուին հայկական կազմակերպուած գաղութներու: Այս բռնագաղթին

հակազդեցութիւնը՝ սփիւռքը, ժայթքումով մը տեր դարձաւ իր դատին եւ զայն կազմակերպեց: Ցուցական արարքներու ընդմէջէն աշխարհը ճանչցաւ հայ ժողովուրդի պահանջատիրական դատը: Այս գործին զուգահեռ հայ դպրոցը կը պատրաստէր երիտասարդներ, որոնք ապագային պիտի շարունակէին վառ պահել հայ ժողովուրդին ջահը, երբ Խորհրդային Հայաստանի մէջ հայը օրէ օր կը հեռացուէր իր ինքնութենէն: Սփիւռքը դարձած էր հայ ժողովուրդին սիրտը, ուժը եւ միակ յոյսը:

Այդ թուականներուն պահանջատիրութիւնը հասած էր իր գագաթնակէտին, ցուցական արարքները սկսած էին ուղղակի հարւածել թուրքը՝ թնդացնե-

լով Եւրոպան եւ Միացեալ Նահանգները:

Քայքայուեցաւ Խորհրդային Միութիւնը: Հայաստանի մէջ կրկին կը ծածանէր Եռագոյնը: Պայթեցաւ արցախեան գոյամարտը:

Ժայռապիւղ երիտասարդներ՝ հողին կանչը լսելով, սփիւռքէն ուղղուեցան Արցախ, միացան տեղացիին, ազատագրելու համար հողը: Տասնեակ տարիներու անջատումէն ետք Հայաստան-Սփիւռք կապերը վերա-



հաստատուեցան. բան մը, որ ճամբան պիտի հարթէր ամբողջական միացեալ Հայաստանի ազատագրութեան:

Սակայն մինչեւ օրս սփիւռքահայութիւնը մեծամասնութեամբ չէ վերադարձած հայրենիք: 70 տարիներ ազատ ու անկախ հայրենիք ունենալ երագելէ ետք, երբ այդ մէկը իրականութիւն դարձաւ, ան մերժեց վերադառնալ: Սփիւռքը սկսաւ տկարանալ: Ձուլումն ու օտարամոլութիւնը իսկայ հարւած հասցուցին Սփիւռքի միասնական ուժին. իբրեւ հետեւանք՝ հայութիւնը





ռու է հայրենադարձութեան գաղափարէն եւ պատրաստ չէ որեւէ զոհողութիւն ընելու հայրենիքին համար: Տարին անգամ մը Հայաստանի մէջ ներդրում կատարելով կամ գրօսաշրջութեան նպատակով այցելութիւն մը տալով չենք կրնար թիկունք կանգնիլ հայրենիքին եւ պայքարիլ մեզ օտարութեան մէջ

գտնուեցաւ իր ինքնութիւնը՝ լեզուն ու մշակոյթը մոռնալու վտանգին դէմ յանդիման: Այս վտանգը պետք էր ճգնաժամային տարողութիւն ունենար եւ մղէր հայութիւնը հայրենադարձութեան, սակայն իրականութիւնը դժբախտաբար տարբեր էր:

Վերջին տասը տարիներուն սփիւռքահայութիւնը ունէր կարելիութիւններ վերադառնալու եւ վերականգնելու Հայաստանը, տիրանալու իր իրաւունքներուն եւ վերաշինելու իր պապեական տունը: Հայաստանի տնտեսութեան քայքայումը եւ տեղացիին մտածելակերպն ու ապրելակերպը պատճառաբանելով, սփիւռքահայութիւնը փախուստ կու տար այդ «վտանգէն»: Փաստօրէն, Հայաստանի տնտեսութիւնը վերջին տարիներուն յառաջխաղացք արձանագրեց: Ակնկալուեցաւ, որ մեծ թիւով հայեր վերադառնան հայրենիք, սակայն փոքր թիւ մը միայն ընդառաջեց ու հաստատուեցաւ Երկիր: Նոյնպէս հայաստանեան քաղաքական գետնի վրայ կարգ մը կուսակցութիւններու եւ կազմակերպութիւններու աշխատանքով սկսաւ ձեւաւորուիլ նոր մտայնութիւն մը, որուն լոյսին տակ հայաստանցիին սկսաւ դուրս գալ Խորհրդային միութեան մշակած այլատերութեան քաղաքականութենէն:

Այս բոլորը սեղանի վրայ դնելէ ետք կու գանք հաստատելու, որ սփիւռքի մեծամասնութիւնը հե-

մխրճող վտանգներուն դէմ: Տնտեսական աւելի լաւ պայմաններ վայելելու համար սփիւռքահայութեան մեծ տոկոսը կը մերժէ հայրենադարձութիւնը:

Սիրելիներ, այլեւս պանդուխտ ենք: Օտար երկիրներու մէջ կը փնտռենք մեր անձնական շահերը՝ մէկդի դնելով հայրենիքին ու հայ ազգին շահերը: Իրականութիւնը հետեւեալն է՝ այլեւս մեր կամքէն անկախ պատճառներով չէ, որ կը գտնուինք սփիւռքի մէջ: Բռնագաղթը չէ, որ այսօր մեզ հայրենիքէն հեռու կը պահէ:

Սփիւռքահայեր, կը գտնուինք ճգնաժամային կացութեան մէջ: Այս ձեւով պիտի մխրճուինք թշնամիին լարած ծուղակին մէջ, օտարին աչքին դառնանք պարզապէս բանուոր, որ լքած է հայրենիքը՝ քանի մը ոսկի շահելու նպատակով:

Ի՞նչի կը սպասենք: Հայաստանի տնտեսական դժուարութիւնները պատճառաբանելով՝ աւելի պիտի տկարանանք:

Սիրելիներ, հայրենիք վերադառնալով, համեստ կեանք ապրելով, մեր զաւակներուն պատուաւոր կեանք կը ժառանգենք հայրենիքի մէջ:

Ժամանակը հասած է դուրս ելլելու ՊԱՆԴՈՒՍՏԻ կարգավիճակէն:

**ՍԵՒԱԿ ՏԵՍԻՐՃԵԱՆ**  
ԼԵՄ-ի «Ա. Շիրակեան» մասնաճիւղ



## ՀՈՒՐԸ ՄԵՐ


Մեր քաջ հերոսները աւաղ զոհուեցան,  
Բայց միայն մարմնով է, որ նահատակուեցան,  
Ահա դեռ կ'ապրին մեր սրտերուն մէջ,  
Դառնալով կրակ եւ հուր անշէջ:

Կանգնեցէք հայեր, ելէք նայեցէք,  
Արարատ լեռը դուք լաւ դիտեցէք,  
Յոն է, որ միայն յոյս պիտի գտնէք,  
Մէկ բռունցք կազմած թուրքին դիմադրէք:

Ալ բա՛ւ է հայեր մենք այսպէս ողբանք,  
Լալու տեղ պետք է միշտ հպարտանանք,  
Գրաւենք հողերը մեր պապենական,  
Դարձնենք դրախտ սիրուն Հայաստան:

**Բ.Ս.**

*ԼԵՄ-ի «Արշալիր Շիրակեան» մասնաճիւղ*



Հայաստանի պատմություն





# Ա՛Ն ԲԱՅԵՐԸ ՆԵՏԵՑԷ՛Ք

Էլի, Մոհամետ, Ալի, Թոնի... Անուններ, որոնք այլևս անծանօթ չեն մեր միջավայրին, այլ՝ ալ աւելի կը մտերմանան հայկական, պատուական մեր շրջանակին, մաս կը կազմեն մեր բարեկամութիւններուն ու ծանօթութիւններուն. վերջապէս, օտար եկեղեցիներու գմբէթներէն զանգեր կը դողանջեն, մզկիթներէն կը լսուի «Ալլահու աքբար»-ը եւ մեր ժողովուրդը կրկին կը գուժէ իր զաւակներէն մէկուն՝ հայութեան մահը...

Ազգերը չեն մեռնիր, անձնասպան կ'ըլլան...  
Ծաղիկներ, սիրոյ խօսքեր, անթարամ յիշատակներ, սեր... Աշխարհի սրբութիւններէն հիմնականը, ամենէն գեղեցիկը, ամենէն անուշը, ամենէն մտերիմ զգացումը, որ կը կերտէ ընտանիքներ, գերդաստաններ եւ ի վերջոյ՝ ազգեր... Նոյն այս գեղեցկութիւնը երբ կը չարաշահուի, նաեւ կը քանդէ ազգեր, կը բնաջնջէ ցեղեր, կ'անհետացնէ հզօր ազգերու հազարամեայ պատմութիւնը...

Ինչպէ՞ս, ինչո՞ւ... Ինչպէ՞ս կարելի է մեր սրտերը բանալ օտարներուն, ինչո՞ւ զանոնք պիտի բանանք օտարներուն, երբ հայուն դիմաց՝ կը փակենք... Ինչպէ՞ս կրնանք օտարին հասկցնել Մեծարենցի, Տերեանի ապրած հայկական մաքուր սերը, ինչպէ՞ս կրնանք Սայաթ Նովային, Յարութին եւ Ատիսին սիրոյ մեկնաբանութիւնները թարգմանել, ինչպէ՞ս կրնանք այս հայկական մաքուր ու վեհ զգացումները պղծել, սպաննել եւ անծանօթ հողերուն մէջ արմատացնել...

Հայ ընտանիքը, հայ ծնողքը հայապահպանման սրբազան գործը կատարելով հանդերձ, իր զաւակները հայկական ջերմ, ապահով թելերու մէջ պահելով հանդերձ, հայկական դպրոց, Նոյնիսկ հայկական համալսարան ուղարկելով հանդերձ, տակաւին օտարին ժանիքներէն ամբողջովին հեռու չի կրնար պահել իր զաւակները, չի կրնար ամբողջովին պահպանել հայկական փափկասուն սրտերը...

Արդեօք հայ երիտասարդը կամ երիտասարդուհի՞ն են յանցաւորները, արդեօք Սագուն ու Յովիկը, Արագն ու Շողերը նուա՞զ մարդ են Ալիէն եւ Թոնիէն, Միշէլէն եւ Թաթիանայէն, ի՞նչ է եղեր այս օտարին ձիրքը, արդեօք սիրտը աղամա՞նդ է, որ սկսած է աւելի արժէք ստանալ հայու սրտէն...

Ո՛չ արաբերէնը, ոչ ալ որեւէ լեզու աւելի գեղեցիկ է, քան իմ մօրմէս լսած ու սորված անոյշ հայերէնս, հազար օտարի աչք չեն բաղդատուիր հայու աչքերու գեղեցկութեան ու խորութեան հետ, ոչինչ աւելի վեհ է, քան հայկական կազմուածքը, դատին հանդէպ, ազգին հանդէպ հայուն ունեցած անձնագոհութիւնն ու զգացումները...

Ի՞նչ է եղեր այս անգտանելի հմայքը, զոր օտարները կը մարմնաւորեն, իսկ հայ երիտասարդութեան մէջ կը մնայ անգտանելի:

Հայութիւնը զգացում է, ոչ ոք թող յանդգնի զրպարտութիւն ընել եւ յայտարարել, որ օտարը սիրելով եւ օտարներու հետ ընտանիք կազմելով կրնայ հայ մնալ, ոեւէ մէկը թող չյանդգնի ըսել, թէ կրնայ մնալ հայ, հայ զաւակ մեծցնել, հայութիւնը պահել, առանց հայ գոյգ, հայ թիկունք ունենալու...

Ազգերը չեն մեռնիր, անձնասպան կ'ըլլան... Ա՛լ այս բաիերը գետին նետենք, կը բաւէ՛ օտար լեզուով արտայայտենք մեր զգացումները, զորս հայերէնէն բացի ոչ մէկ լեզու կրնայ արտայայտել, կը բաւէ՛ մենք մեզ նետենք օտարներու ժանիքներուն մէջ, նոյն ժանիքները, որոնք կը ճակնկեն մեր հայկական իրականութիւնը, օրէ օր կը շարունակեն արիւն քաշել անկէ...

Ա՛լ այս բաիերը գետին նետենք, կը բաւէ՛ մենք մեր ձեռքերով փորենք մեր գերեզմանները՝ մեր ազգը տանելով դէպի մահ:

**ԱՅՔ**  
ԼԵՄ-ի «Հայաստան» մասնաճիւղ

# ՕՏԱՐԵՆ ԵՐԲԵՔ ՄԵՉ ՖԱՅՏԱ ՉԿԱՅ

Կը տանի մեզ հոսանքը, երբ կը տարուինք գեղեցկութեամբ, շլացուցիչ տեսքերով, երբ կ'ուզենք կապել եւ իւրացնել ուրիշինը, երբ կը փորձենք հետեւիլ օտար ազգերու սովորութիւններուն՝ կարծելով, թէ նորոյթին կը հետեւինք: Կը տանի մեզ հոսանքը, երբ օտար բառեր կը գործածենք, օտար լեզուներով կը կլանուինք՝ պահ մը մոռնալով մեր հայ մայրերուն փափկասուն ձեռքերը, որոնք ինչ տանջանքներով եւ տառապանքներով փորձած են հողին վրայ գրել հայոց այբուբենը եւ զայն սորվեցնել հայ մանուկներուն: Արդեօք անոնք այս բոլորը ըրին, որպէսզի դարեր ետք հայը օտար լեզու գործածէ...



ամօթ կը զգան, բայց իրենց ամօթ զգալու մղումը կու գայ այն իրողութենէն, որ նմանները հայ ըլլալու առաւելութիւններէն ու արժանիքներէն տղեակ չեն: Իսկ երբ օտարը այդպիսի անձերուն հարց կու տայ, թէ ո՞վ է հայը, ի՞նչ է անոր ազգիդ պատմութիւնը, անոնք ապշած պիտի նային հարցնողին, առանց պատասխան ունենալու:

Ինծի համար այսպիսի հայեր միայն անունով հայ կը կոչուին, չունին այդ հոգին, զոր կը կրէ հայրենիքին ու ազգին նուիրուած հայ կամաւորը, չեն կրնար նմանիլ այն հայուն, որ միշտ կ'երազէ Արարատը ունենալ եւ գիտէ, որ օրը պիտի գայ, երբ բոլորս միասին մեր հայրենիքը պիտի երթանք:

Մեր պապերը ունէին միայն մէկ նպատակ՝ ապահովել հայուն գոյութիւնը, ամեն բան ընել, որ հայը ապրի, հայ ազգը բազմանայ, ինչ որ հակառակն է թուրքին նպատակին՝ միայն մէկ հայ պահել աշխարհին վրայ եւ ան ալ՝ թանգարանին մէջ: Իսկ այսօր օտարամոլութեամբ տարուելով, օտար ամուսնութիւններ կնքելով՝ կը փորձենք խեղդել հայուն հոգին, ձախողեցնել մեր պապերուն նպատակը:

Կ'ըսեն, որ օտար հարս բերելը նուազ մեղք ու սխալ է, քան՝ օտար փեսայ: Ո՛չ, երկուքն ալ օտարի հետ կնքուած ամուսնութիւններ են, հաւասարապէս սխալ են, որովհետեւ կը տանին մէկ ուղղութեամբ՝ օտարացման: Որքան ալ ՀԱՅ ըլլայ ընտանիքին հայրը կամ մայրը, ան պիտի չկարենայ փոխանցել այդ ազգային ոգին, հայկական մթնոլորտը, նոյնիսկ եթէ հայրենասէր եւ նուիրեալ անձ մը ըլլայ: Թէեւ կան կարգ մը բացառութիւններ, սակայն անոնք հիմք չեն ծառայեր ժխտելու այն, որ օտար ամուսնութիւնները օտարացման կ'առաջնորդեն: Ազգային ոգին կը փոխանցուի հայոց պատմութեան ընդմէջէն, կարդալով մեր ֆետայիներու ապրումներուն ու մարտնչումներուն մասին եւ ապրելով անոնց հետ, այդպիսով

Այսպիսի պայմաններու մէջ եթէ ոչ առաջին, ապա հաստատ երկրորդ սերունդը պիտի դադրի հայ ըլլալէ, աշխարհի ամենէն գեղեցիկ լեզուն խօսելէ, ամենէն ուժեղ կամքն ու հաւատքը ունեցող ազգի մը պատմութիւնը գիտնալէ: Նման ուղիով ընթացողները նոյնիսկ հայ չեն կոչուիր,



STUDIO VENIUS

Նաեւ կ'ուժեղանայ մեր հաւատքն ու հայկակա-  
նութիւնը:

Բա՛ւ է կառչիկը օտարին, բա՛ւ է ձուլումի են-  
թարկենք մեր զաւակները:

Օտարը երբե՛ք մեզ ֆայտա չէ ունեցած, հիմա՞  
պիտի ունենայ: Ի՞նչ կը յուսանք օտարէն. անոնք  
մեզի ՆԱՐԵ՛Կը պիտի փոխանցեն, անոնք պիտի  
ուզե՞ն, որ մեր տուներուն մէջ հնչէ ԿՈՄԻՏԱՍԻ  
անուշ ձայնը, անոնք մեզմէ պիտի խնդրե՞ն, որ  
կարդանք Սիամանթոյի, Գրիգոր Զօհրապի, Շան-  
թի, Վարուժանի եւ Վրացեանի գրութիւնները:

Անշուշտ Ո՛Չ. բա՛ւ է այս ժխտական պատաս-  
խանը լսենք, մենք եւս պետք է կարողանանք այդ  
Ո՛Չը ըսել:

Ուրեմն պետք է սթափիլ, դուրս գալ ձուլումի  
ճիրաններէն, օտարամոլութեան շլացուցիչ  
երազներէն պետք է արթննալ, որովհետեւ անոնք

անյոյս եւ կործանիչ են:

Սթափիկը՝ յանուն մեր անմեղ նահատակնե-  
րուն, յանուն մեր քաջ ֆետայիներու դիւցազնու-  
թեան, յանուն մեր նուիրեալ սուրբ մայրերուն: Ի  
վերջոյ, յանուն մեր ԶԱՅ ազգին, հայրենիքին, յա-  
նուն մեր կարօտալի հողերուն: Միշտ Ո՛Չ ըսենք,  
ո՛չ բոլոր հոսաքներուն, մերժենք զանոնք, այն-  
քան ատեն որ կ'ապրինք ու կը շնչենք, քանի որ  
ԶԱՅը ծնած է հայօրէն ապրելու եւ հայօրէն շնչե-  
լու համար հայաբոյր օդը, առանց որեւէ օտար  
ապականութեան:

**ՔՐԻՍԹԻՆԱ ՍՐԱՊՈՆԵԱՆ**

*ԼԵՄ-ի «Արշալիր Շիրակեան» մասնաճիւղ*

# ԱՐԱՐԱՏԻՆ ԴԻՄԱՑ

Վերջապես հասած էր այն վայրկեանը, երբ կանգնած էի ազգային հպարտութիւն ու խորխտութիւն ներշնչող հայոց վսեմ Արարատ լեռան դիմաց:

... Արարատն է, որ տարիներ շարունակ լսած ես իր մասին, տեսած զայն նկարներու մէջ եւ անդադար երազած այն վայրկեանը, երբ պիտի հանդիպիս անոր:

... Եւ ահաւասիկ իրականացած է քու տարիներու երազդ: Կանգնած ես սրբազան լեռան դիմաց՝ աչքերդ սեւեռած անոր:

... Կ'ուզես սառած մալ այդ տեսարանին դիմաց, մոռնալ անցեալը, ներկան եւ ապագան ու կանգնիլ հոն:

Հոն՝ Արարատեան աշխարհին մէջ, ուր կայ սրբութիւն, խորհրդաւորութիւն ու ազատութիւն:

Հոն, ուր կ'ամրապնդուի հայկականութեան անհրաժեշտութիւնը իւրաքանչիւր հայու մէջ, եւ կը վերյիշեցնէ, թէ իւրաքանչիւր հայ հպարտ պէտք է զգայ իր հայերէն լեզուով, պատմութեամբ եւ մշակոյթով:

Եւ ահա թաղուած ես խոր մտածումներու մէջ: Երկինքը ամպոտած է գլխուդ վերեւ: Մութ մտածումներով շրջապատուած են հոգիդ ու միտքդ: Տեսարանը պղտորած է քու դէմդ... Արարատը խռոված կը թուի: Խռոված մեզմէ, մեր առօրեայ հայկական դառն ու ցաւալի իրականութիւններէն, որոնք մեզմէ շատերը կը տանին դէպի օտարացում, ծուլում եւ հեռացում հայկական արմատներէն:

Այսօր, իմ եւ քու տարիքիդ երիտասարդներ տակաւին առիթ կ'ընծայեն թուրքին իւրացնելու այս սրբազան լեռը, ո՛չ միայն աշխարհագրական սահմաններով, այլ նաեւ բարոյական առումով:

Ներկային կան հայեր, որոնք չեն գիտեր Մեսրոպեան այբուբենը, չեն ճանչնար մեր հայոց պատմութիւնը, մշակոյթը, բարքերն ու սովորութիւնները, բռնած են օտարամոլութեան ուղին՝ գերադասելով «օտար»-ը, անտեսելով հայկականը, կարծելով, թէ օտարինը լաւագոյնն է: Իսկ ամենէն ցաւալին այն է, որ հայը կը քաջալերէ թրքականը՝ ուրանալով իր պատմութեան հերոսները, որոնց համար մահ գոյութիւն չունէր, կար միայն ազգային գերագոյն նպատակ, որուն համար պէտք էր






զոհել ամեն բան: Յերոսներ, որոնք զոհաբերութիւնը առաքիկութիւն չէին սկստեր, այլ՝ պարզ ազգային պարտականութիւն:

Սրբազան լե՛ռ, այդպիսի հայեր կարողութիւն չունին տեսնելու քու հիասքանչ տեսարանդ եւ զգալու քու վեհանձնութիւնդ: Անոնք չեն ճանչնար մեր ոսկեայ այբուբենը, կ'արհամարհեն հայերէն լեզուն, ինչպէս նաեւ երբեմն ամօթ կը զգան խօսելու կամ հաղորդուելու հայերէն լեզուով: Անոնք կը կարծեն, թէ իւրաքանչիւր անձ պէտք է տիրապետէ միայն օտար լեզուի, լաւատեղեակ ըլլայ միայն օտար սովորութիւններէն եւ բարքերէն՝ մոռնալով, որ ազգային արժէքները գիտնալը եւ պահպանելը անհրաժեշտ պարտականութիւն մըն է անձի մը համար՝ իւրաքանչիւր հայ անհատի համար:

Մեր այբուբենը, որ անբաժան մէկ մասնիկն է մեր մշակոյթին, մեզի մնացած միակ զէնքերէն է՝ պայքարելու օտարամոլութեան հսկայ ալիքներուն դէմ: Օտարամոլութիւնը մեծագոյն վտանգն է, որ կը սպառնայ մեր գոյատեւման, սակայն այբուբենը ինչպէս միշտ՝ կարողացած է յաղթահարել պատմութեան բոլոր դժուարութիւնները, ինչպէս Պարոյր Սեւակ ըսաւ՝

**«Շատ բանից է զրկել մեզ թշնամին:  
Իր ձեռքով նա մեր ձեռքն է հատել,  
Յատել է ականջն ու ոտնաթաթեր,  
Աչքեր է հանել դաշոյնով իր սուր,  
Կտրել է նաեւ արմատից լեզուն,  
Եւ սակայն... ի՛ գուր.  
Չի՛ հատուել լեզուն,  
Մնացել է նա հատուելո՛ւմ անգամ...»**



Իբրեւ հայ երիտասարդներ, պէտք է սատար հանդիսանանք հայապահպանման գործին, պէտք է մեր կատարելագոյնը գործենք՝ ի նպաստ Յայ դատին եւ սրբազան հայրենիքին: Իբրեւ հայ ազգի գաւակներ, յաճախենք հայկական վարժարաններ, միշտ պաշտպան հանդիսանանք մեր պատմութեան ու մշակոյթին: Լա՛ւ գիտնանք մեր մայրենի լեզուն, այսինքն՝ կարողանանք ճիշդ ձեւով խօսիլ եւ արտայայտուիլ, ինչպէս նաեւ գրե՛նք մեր հայերէն ոսկեայ տառերով, ըլլայ անհկա թուղթի կտորի մը վրայ կամ՝ համակարգիչը գործածութեան ընթացքին:

... Եւ աչքերս ուղղած անոր, կառչած մնացած սեփական հողիս վրայ, սիրտս թնդալով հայկական վսեմ եւ ջերմ զգացումներով, միտքս ու հոգիս սուզուած իր աշխարհին մէջ, քաջ գիտեմ, թէ բոլոր հայ երիտասարդները երբ կանգնին իր դիմաց՝ Արարատին դիմաց, ինծի նման ճակատաբաց եւ հպարտօրէն պիտի ըսեն Գեորգ Էմինի խօսքերը.

**«Ես հա՛յ եմ, հին, ինչպէս լեռն Արարատեան  
Յագար տե՛գ է բախուել իմ վահանին ահեղ,  
Փշրե՛լ եմ ես սակայն ամեն սուր ու պատեան  
Եւ լեռներիս նման գլուխս վե՛ր պահել»:**

**ՆԱՆՈՐ ՊԱԼԱՊԱՆԵԱՆ**

*ԼԵՄ-ի «Արշալիր Շիրակեան» մասնաճիւղ*

# ՄԵՆՔ ՆՈՅՆՆ ԵՆՔ, ԲԱՅՅ ՈՒՐԻՇ ԵՆՔ...

Մենք եւ դուք նոյնն ենք...

Նոյն լեռնն եկանք, նոյն տապանակէն, նոյն դաշտէն, նոյն սահապետէն...

Ժամանակը փոխեց շատ բան... Գրեց նոր պատմութիւն, նոր ճակատագիր...

Փոխեց մեզ եւ ձեզ... Փոխեց բոլորս...

Այդ պատճառով է, որ մենք եւ դուք նոյնն ենք,

Բայց ուրիշ ենք...

Մենք տարբեր ենք ձեզմէ, եւ դուք ալ մեզմէ... Բայց նոյնն ենք...

Հայ ենք... եղեր:

Մենք ունինք պատիւ... դուք ալ հաշիւ...

Մենք ունինք բուրաստան՝ Արցախ, Կիլիկիա, Հայաստան...

Հարազատ հող, տուն հայրական...

Իսկ դուք ունիք տարածք, որ կը տարբերի ըստ հաշիւի,

Լիբանան, Չինաստան, հասնելով մինչեւ Թուրքիա...

Ուր որ աժան է ու լաւ որակի:

Մենք ունինք դարերու կեանք, հարուստ մշակոյթ, հազար ու մէկ եկեղեցի...

Դուք ալ հազար ու մէկ հաշիւ՝ առուծախի...

Մենք ունինք Յաղթանակ, Սարդարապատ, Մայիս 28...

Իսկ դուք թերեւս ուրիշ թուական մը... թերեւս ալ նոյնը...

Բայց ի՞նչ տարբերութիւն ձեզի համար:

Մենք ունինք երազ... գիշերները անցընելու Արարատի կանաչ լանջերուն...

Դուք ալ նոյնպէս՝ Պոլսոյ անբարոյ գիշերավայրերուն մէջ...

Մենք ունինք անձնագոհութիւն, իսկ դուք անձնական գոհունակութիւն...

Մենք ունինք ազգի նուիրումի դաստիարակութիւն... իսկ դուք երբեմնի փառքի իղձ ու տխմարներու տրամաբանութիւն...

Մենք ունինք՝ «Ամբողջական Հայաստան, ամբողջական հայութեամբ» տեսլականը...

Իսկ դուք՝ «Ո՛ւր հաց, հոն կաց» փիլիսոփայութիւնը...

Մենք ունինք ֆետայիի ազնուական զգացում... իսկ ձեր ճակատը՝ դրոշմ դաւաճանի...

Մենք ունինք եռագոյն՝ կարմիր, կապոյտ ու նարնջագոյն...

Ձեր գոյները կը տարբերին՝ կանաչ, արծաթի կամ ոսկեգոյն...

Մենք ունինք գիր, գրականութիւն, լեզու մայրենի,

Իսկ դուք կը խօսիք ամէն լեզու՝ շուկայի, տոլարի ու ոսկիի...

Մենք կը բողոքենք ու ոճրագործներու նկարները վար կ'առնենք...

Բայց դուք համաձայնագիրներ կը ստորագրէք ու ձեր խանութները բաց կը պահէք...

Մենք եւ դուք նոյնն ենք, բայց ուրիշ ենք... եղեր...

Մենք ունինք Էջմիածին, խաչքար ու Թագուհի թարգմանչաց...

Դուք ալ ունիք ձեր երկրային աստուածներն ու անաստուած վաճառականութիւն...



Մենք այս աշխարհը պիտի ձգենք ու երթանք՝ հանգիստ խիղճով ու ժպիտով...  
Պիտի վերադառնանք՝ մեր հոգիները հանգչեցնելու ամբողջական հայրենիքի հարազատ երդիքին տակ...

Իսկ դուք պիտի մնաք անզգամ ու անտարբեր...  
Ու երբ ժամանակը գայ ձեր հոգիներու վեր բարձրանալուն, պիտի մերժուիք՝ հայրենիքին դաւաճանելու համար...

Մենք եւ դուք նոյնը չենք... Մենք սկզբունքի տեր ենք, իսկ դուք...

**ՀՐԱԿ Թ. ԱՒԵՏԱՆԵԱՆ**



Լեզուն ազգի մը անունն է, իսկ մականունը՝ հաւատքը: Եթէ այս երկուքը կորսնցնէ, անձ մը չի կրնար ինքզինք ներկայացնել: Հայ ժողովուրդը միասնական է իր լեզուով, հաւատքով եւ դատով, ան տարիներ շարունակ պայքարած է ու կը պայքարի իր լեզուին, հաւատքին եւ դատին համար՝ հաւատալով այն սկզբունքին, որ նոյնիսկ եթէ հոգիդ տաս, վայրագ թուրքին լուծին տակ գերի պետք չէ դառնաս: Մեր լեզուն հարուստ է եւ արժեքաւոր: Կը հաւատամ, որ մեր ժողովուրդը ունի շատ հրաշալի եւ ուժեղ հաւատք՝ իր լեզուին եւ դատին նկատմամբ:

Հայութիւնը ունեցած է նաեւ աննման հերոսներ, Աղասիի նման, որոնք քաջ են, ազգասեր եւ աստուածավախ: Նմանները պաշտպանն են մեր Դատին ու լեզուին, ինչպէս նաեւ՝ կրօնքին: Կը հաւատամ, որ այսպիսի տիպարներ ունինք նաեւ այսօր, սակայն մեր Դատը իւրաքանչիւր հայէ կը պահանջէ ըլլալ անքուն պահպանը մեր լեզուին եւ արժեքներուն: Եթէ կարելի ըլլայ այս մէկը կատարել, մենք ինքնաբերաբար մեր երագի իրականացման ուղիին վրայ ճիշդ քայլեր կը սկսինք նետել եւ կրնանք յաղթանակ արձանագրել թուրքին դիմաց, որ ամէն ձեռով կը փորձէ մեզ հեռացնել մեր ինքնութենէն, լեզուէն եւ հաւատքէն: Բայց մենք քաջութիւնը ունինք դեմ կանգնելու ամէն տեսակի հակահայ երեւոյթներու: Այսօր թուրքը ամէն ճիգ ի գործ կը դնէ՝ հայութիւնը տկարացնելու, բայց այդ մէկը անկարելի է, որովհետեւ

մեր լեզուն մեր գէնքն է եւ լեզուի յառաջդիմութիւնը՝ մեր փամփուշտը: Այդ վայրագ թուրքը ո՞վ է, որ գայ եւ այս հիանալի ստեղծագործութիւնը, այս գեղեցիկ հայրենիքը մեզմէ խլէ: Բայց աշխարհը լաւապէս գիտէ, նոյնիսկ Աստուած գիտէ, որ հայ ազգը կրնայ դեմ դնել բոլոր մարտահրաւերներուն եւ սպառնալիքներուն, կանգնիլ փոթորիկներուն եւ վտանգներուն դեմ յանդիման: Չեմ կարծեր, թէ նման զօրաւոր ազգ գոյութիւն ունի, ազգ մը, որ գիտէ մարտընչիլ, դիմադրել, չյուսահատիլ եւ մնայուն պայքար մղել:

Ուե՛ւ հայ, որ իր ազգին, լեզուին եւ հաւատքին կառչած չէ, ուրեմն նաեւ իբրեւ մարդ թերի է, որովհետեւ որքան ալ լեզու գիտնայ անձ մը, իր մայրենի լեզուին անիմացութեան պարագային արդէն պայքարը կորսնցուցած կ'ըլլայ:

Պաշտպանէ՛ լեզուդ, սիրէ՛ լեզուդ, որովհետեւ անիկա ողնածուծն է քու նկարագրիդ, անիկա՛ է քու գէնքդ, որով կրնաս մեծ պայքարներ մղել ու յաղթանակներ ապահովել: Եթէ տերն ես լեզուիդ, ուրեմն ո՛ւր ալ երթաս, որքան ալ տարբեր ազգերու մէջ ապրիս, դուն կը մնաս ՀԱՅ:

**ՍԱՐԻՆ ՂԱԶԱՐԵԱՆ**

ԼԵՍ-Ի «ՐԱՖՖԻ» ՄԱՍՆԱԾԻՂ

Ուզուի՛ր





# ՈՒՇԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ՝ ՅԵՐՈՍՈՒԹԵԱՆՑ



Հայ յեղափոխական դաշնակցության 121-ամեակին առիթով՝ իբրև հայ եւ դաշնակցական, հոգւոյս պարտքը կը զգամ միտքերս արտայայտել:

121 տարիներ առաջ հայ ժողովուրդը կը ստեղծէ իր հինգերորդ թագաւորութիւնը, «Հինգերորդ ասպետութիւնը», ինչպէս կ'անուանէր զայն մեր անզուգական կաթողիկոսներէն Մկրտիչ Խրիմեանը:

Եւ ինչո՞ւ թագաւորութիւն, թէեւ այս վերջինը իր նախկիններէն կը տարբերէր անով, որ իր որոշումները, ծրագիրները եւ գործունէութեան եղանակը չէին բխէր տուեալ անձէ մը, այլ անոնք ցուցումն էին ժողովուրդին հարազատ յոյզերուն, ցաւերուն, տառապանքներուն եւ սխրանքներուն:

Ինչպէս նախկինները, այս նոր ասպետութիւնը եւս առաջին հերթին ստեղծեց բանակ՝ թէ՛ ռազմական, եւ թէ՛ մտաւոր բնոյթ կրող: Մարտնչումի հասկացողութիւնը, զոր մինչ այդ հայը միայն կարդացած էր իր պատմութեան գիրքերուն մէջ, դարձաւ իրողութիւն: Ծնան Գայլ Վահանները Սասնոյ մէջ, երկուան Մամիկոնեան Վարդանը արտացոլաց Խանասորայ Վարդաններու ընդմէջէն. տակաւին, Աշոտ Երկաթեան ռազմավարութիւններն ու խիզախութիւնները յարութիւն առին:

Ինչպէ՛ս երկիւղածութեամբ չմօտենամ այս ասպետութեան, որ հանդիսացաւ ստեղծիչը «Գրչի մարտիկներու», որոնք իրենց հանճարեղ եւ յեղափոխական երկերով խանդավառեցին գարուն սերունդները, մտաւոր վեհ մակարդակով Նոյնի՛սկ գերազանցեցին բռնակալ պետութեան մը «մշակութային արժէքները», եւ որ՝ սարսափի մատնուած, գործադրեց իր ճիւղային ծրագիրը:

Ի դէպ, ո՛վ Դաշնակցութիւն, քու մէկ դարու գոյութիւնդ եւ յարատեւութիւնդ կը պայմանաւորին ա՛յն բանով, որ դուն հաստատութիւն մը չէիր եւ ոչ ալ կարգ մը մարդոց ու խմբաւորումներու գործիք: Ո՛չ, դուն եւ քու գոյութիւնդ շատ պարզօրէն կը բացատրուին անով, որ ի՛նքդ էիր գաղափարաբանութիւն մը, ներշնչում մը, ոգեղէն արժէք մը եւ դաստիարակութեան աղբիւր մը: Չինուորներդ կը նահատակուէին վասն այս ոգեղիկութեան եւ գաղափարաբանութեան տարածման, եւ ոչ թէ որոշ կառոյցի մը համար:

Կ'ըսեն՝ «Մեղաւոր Է Դաշնակցութիւն»:

Այո՛, «մեղաւոր» Է Դաշնակցութիւնը, որովհետեւ ա՛ն է, որ առաջին հերթին վերահաստատեց հայոց արժանապատուութիւնը եւ հայ մարդուն տուաւ որպէս արժանաւոր մարդ ապրելու գիտակցութիւն ու կամք:

Այո՛, «մեղաւոր» է Դաշնակցութիւնը, որովհետեւ ան պատնէշ դարձաւ եւ արգելակեց հիւանդ մարդուն (սուլթան Ապտիլ Յամիտ երկրորդ) կողմէ արդէն նախօրօք ծրագրուած հայոց բնաջնջման ծրագիրը, եւ ո՛չ թէ պատճառ դարձաւ, որ այս մէկը ծրագրուի եւ գործադրուի արդի «երիտասարդ» ու «քաղաքակիրթ» թուրքերուն կողմէ:

Այո՛, տակաւին «մեղաւոր» է Դաշնակցութիւնը, որովհետեւ ան համախմբելով հայու տարտղնուած բեկորները, եղաւ ռահվիրան հայոց պետականութեան ստեղծման:



Վերջապէ՛ս, «մեղաւոր» է Դաշնակցութիւնը, որովհետեւ ան Հայաստանը «յանձնեց» պոլշեիկներուն՝ զայն նկատելով չարեաց փոքրագոյնը, մինչդէռ միւս կողմէ, այլընտրանքի պարագային թրքական խուժանը, որ կը սպասէր Արեւելահայաստանի դարպասներուն առջեւ, վճռական քայլերով պիտի կոխէր Հայաստանի վրայ եւ հասներ իր ցեղակիցներուն:

Եւ ահա՛, մոլորեալ հայեր դագաղ մը շալկած, որուն վրայ կար Դաշնակցութեան զինանշանը, զայն կը համարեն մահացած:

«Մահացած» ասպետութիւն մը, որ միաւորեց հայկական ցրուած մասունքները, կազմակերպեց զանոնք եւ ստեղծեց Հոգեւոր Հայրենիք մը:

«Մահացա՛ծ» ասպետութիւն մը, որ հայրենիքէն դուրս, հայրենի հողին կարօտ, կրկին պատրաստեց ֆետայիներ, որոնք արիութիւնը հասցուցած իր կատարելագործումին, ցնցեցին Լիզպոնը եւ ահ ու սարսափի մատնեցին թուլամորթ եւրոպացիս:

Հուսկ, «մահացած» ասպետութիւն մը, որ դարձեալ իր որդիները գործուղեց այս անգամ հոգեւոր հայրենիքէն դուրս՝ ճշմարիտ հայրենիք, ուր անոնք իրենց կեանքը նուիրեցին հայրենիքի անկախութեան եւ վերածնունդին:

Այո՛, այս է այն ասպետութիւնը, որուն մէկ անդամը ըլլալու համար շատ հպարտ եմ: Ասպետութիւն մը, որ այսօր կը գործէ նաե՛ւ հայրենիքի մէջ:

Այսօր Դաշնակցութիւնը մեզի համար պէտք է դառնայ հայրենասիրութեան աղբիւր, կրթօճախ, մտքի ու սուրի բանակ: Պէտք է այլեւս դառնայ ներշնչում եւ ոգեղէն արժանիք: Պէտք է իւրաքանչիւրս ծառայէ ազգին ու հայրենիքին՝ անկէ ներշնչուելով: Ու այլեւս պէտք է ազատագրել զայն կառոյց մը ըլլալու տրամաբանութենէն ու դարձնել ՆՈՐ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐ:

ԳՐԻՉ  
ԼԵՄ-ի «Հայաստան» մասնաճիւղ



## ԱՆՉՈՒԳԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԸ

17 Մարտ 1905: Այս թուականին էր, որ հայ ազատագրական շարժման ռահվիրաներէն, մեր կուսակցութեան հիմնադիր եւ անզուգական առաջնորդ՝ Զորիստափոր Միքայէլեան իր գործընկերոջ՝ Վռամշապուհ Զենտիրեանի հետ զոհ գացին Պուլկարիոյ Վիտոշ լեռան լանջին ռումբի փորձարկման ժամանակ: Ռումբ պիտի խորտակեր Երլտըզի գահին բազմած ու հայ ժողովուրդի ցաւը հանդիսացող Սուլթան Յամիտը: Յաճախ մենք մեզի հարց կու տանք, թէ ինչո՞ւ ան ընդդիմացաւ իր կուսակիցներուն եւ որոշեց անձամբ կազմակերպել ու իրականացնել սուլթանի մահափորձը: Միթէ ան գործողութիւնը չէ՞ր վստահեր այլ ընկերոջ: Միթէ ոեւէ երդուեալ դաշնակցական մարտիկ չէ՞ր կրնար յաջողութեամբ պսակել այս վտանգաւոր նախաձեռնութիւնը: Ի՞նչ էր, որ զինք մղեց նման քայլի...


Դաշնակցութեան պատմութեան մէջ յաճախ կը հանդիպինք անձնագոհութեան ու զոհաբերութեան դէպքերու, սակայն Վիտոշի մէջ պատահածը յատկանշական է այն իմաստով, որ ղեկավարը՝ իր կազմակերպչական գործերը մեկդի դնելով, անձամբ կը մասնակցի վտանգաւոր եւ պատասխանատու նախաձեռնութեան մը, որուն յաջողութեան հաւատալով ալ կը նահատակուի՝ մեծ վիշտ պատճառելով Դաշնակցութեան հսկայ ընտանիքին եւ ընկճուած ժողովուրդին: Ճիշդ է, որ կորուստը մեծ էր, սակայն Զորիստափորի նահատակութիւնը մարտունակութիւն եւ վճռակամութիւն ներշնչեց ու կը շարունակէ ներշնչել իւրաքանչիւր դաշնակցականի:

Այս գերագոյն զոհաբերութեամբ «Վիտոշի Բազէ»-ն ապացուցեց, որ ազգին գլուխը հանդիսացող ղեկավար մարմինը կը կանգնի իր տառապեալ ժողովուրդին կողքին, եւ որ պատրաստ էր դիմել ամէն տեսակ գործողութեան՝ յանուն անոր ազատութեան: Ան ո՛չ միայն խօսքով, այլ նաեւ գործով արժեւորեց յեղափոխական կեանքի անսակարկ անձնուիրումը: Եւ այսպէս, տարիներ շարունակ դաշնակցական գործիչներ շարունա-



կեցին Զորիստափորի, Ռոստոմի եւ Չաւարեանի հաւատացած գաղափարներուն հաւատարիմ մնալ՝ իրենց աշխուժ գործունէութեամբ: Այս ղեկավարներուն հետեւեցան բազմաթիւ սուրբալուստեալ տղաք, որոնք աշխարհի տարբեր վայրերու մէջ կազմակերպեցին ահաբեկչական արարքներ, վրիժառու բազուկներ եղան, մահապատիժի ենթարկեցին թուրք դիւանագետները՝ միտելով աշխարհին ծանօթացնել Յայ դատն ու պահանջատիրութիւնը: Ամէնէն արդի օրինակը բոլորիս ծանօթ Լիզպոնի գործողութիւնն է, որուն ընթացքին հինգ տիպար տղաք խեղդեցին իրենց «ես»-ը եւ գայն վերածեցին զոհաբերութեան:


Սակայն ժամանակներն ու պայմանները փոխուած են: Ներկայիս ո՛չ զէնքը մեր միակ փրկութիւնն է, ոչ ալ՝ ահաբեկչութիւնը: Արտաքին թշնամիներ եւ միջազգային ուժեր ամէնուրեք եւ ամէն օր ճնշում կը բանեցնեն մեր ժողովուրդին վրայ՝ մերթ-մերթ զինուորական յարձակումներու



**ՀԱՅ ՅԵՐԱՓՈՒՆԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՈՒԹԻՒՆ**

Մեզ մնում է ուրեմն երկուսից մեկը.- կամ սեփական ձեռքով թաղել մեր դատը, կամ թե՛ շարունակել մեր կռիւը այնքան, որ նա՝ թուրքերի դէմ մինչեւ այժմ ուղղուած դժգոհութիւնների, պաշտօնական բողոքների եւ թղթի սպառնալիքների շրջանը անցնելով, վերջապէս մի վերջ դառնայ նաեւ այն ազգութիւնների ու պետութիւնների համար, որոնք կապ ունեն թուրքիայի եւ մեր հարցի հետ: Այն օրը, երբ դրանք եւս կը համոզուին, որ այդ վերջին դէմ պէտք է դիմել վիրաբուժութեան, մեր դատը ապահովւած կը լինի. այդ օրը կը լինի ե՛ւ մեր յաջողութեան օրը:

**Բ. ՄԻԶԱՅԷԼԵԱՆ**



*Հայաստանի Ազգային Դաշնակցություն*

րուն: Ձերբազատելու համար Թուրքիոյ եւ Ազրայէճանի բանեցուցած ճնշումներէն, հարկաւոր է կառչած մնալ Զրիստափորի հաւատացած գաղափարին՝ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ: Ազատութիւնը ինքնին բարդ հասկացողութիւն է: Ամէնէն առաջ պէտք է ազատիւք այն ներքին բռնակալէն, որ արգելք կը հանդիսանայ վստահօրէն գործելու եւ պատասխանատուութիւն ստանձնելու: Չըսենք՝ «Հոգ չէ, ընկերս կ'ընէ» կամ՝ «Ժամանակ չունիմ»: Ըլլանք մեկական ղեկավարներ մեր անձին, մեկդի դնենք անձնական շահերը եւ մտածենք հաւաքական շահերու մասին:

Նախաձեռնելով: Այո՛, հարկ է ահաբեկել մեր ֆիզիքական թշնամիները, բայց պահ մը կանգ առնենք եւ անդրադառնանք մեր ներքին թշնամիներ:

**ԱՔԻԿ ԱՔՐԱՅԱՍԵԱՆ**  
 ԼԵՄ-ի «Հայաստան» մասնաճիւղ

**ՊԻՏԻ ՀԵՏԵԻՆՔ ՆՈՒԻՐԵԱԼՆԵՐՈՒ ՈՒՂԻՒՆ**

Դաշնակցութիւնը հիմնուած օրէն եղաւ այն կուսակցութիւնը, որ պայքարեցաւ հայ ժողովուրդի շահերը, իրաւունքները պաշտպանելու համար եւ այսպիսով հայ ժողովուրդի գոյատեւման ազդակ դարձաւ: Իր ամբողջ պատմութեան ընթացքին անհկա եղաւ պայքարող: Թե՛ սփիւռքի, եւ թե՛ Արցախեան պայքարի օրերուն տուաւ հերոսներ՝ միշտ մնալով պատնէշի վրայ ու միշտ «Դեպի յառաջ» նշանաբանով:

Դաշնակցութիւնը իր շուրջ համախմբեց բազմաթիւ նուիրեալ դաշնակցականներ եւ համակիրներ՝ իր գաղափարին համոզուած հայորդիներ, որոնք անշահախնդիր եւ մեծ նուիրումով կը կատարեն Դաշնակցութեան կանոնագիրին ու ծրագիրին նպատակը:

Մենք՝ նոր սերունդս, տեսնելով եւ համոզուելով անցեալի հերոսներու զոհաբերութեամբ, անձնուրացութեամբ, զանոնք ունենալով իբրեւ օրինակ, եկած ենք այսօր շարունակելու անոնց սուրբ գործը՝ հաւատալով, որ կը գտնուինք նոյն ճամբուն վրայ: Բոլոր ճամբաները կը տանին դեպի Մայր Հայաստան:

**ՅՈՒՆԵՐ ԳԱԼԱՅԱՆ**  
 ԼԵՄ-ի «Րաֆֆի» մասնաճիւղ



# «ԿԵՑՑԷ՛ ԶՆԴԿԱՅԱԻՐ»


Դեկտեմբեր 22-ին Ֆրանսայի խորհրդարանը ընդունեց օրինագիծ մը, որուն հիմամբ կը պատժուի այն անձը, որ կը հերքէ Զայոց ցեղասպանութիւնը: Թրքական կառավարութիւնը, որ խորքին մէջ վստահ էր Ֆրանսայի կողմէ նման քայլի մը որդեգրումէն, սկսաւ տակնուվրայ վիճակ մը ապրիլ:

Թուրքիոյ վարչապետ Էրտողան քննադատեց Ֆրանսան եւ յայտարարեց, որ ան եւս ցեղասպանութիւն գործած է Ալճերիոյ մէջ եւ սպաննած մօտ մէկ միլիոն ալճերիացի արաբներ: Ինչպէս միշտ, Թուրքիա այս անգամ եւս իր դիւանագիտական ներկայացուցիչները տուն կանչեց Ֆրանսայէն եւ սպառնաց ռազմական

ու տնտեսական յարաբերութիւնները խզել անոր հետ: Իսկ ամէնէն հետաքրքրականը այն է, որ Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Ահմետ Տաւութօղլու կոչ ուղղեց թուրք դեսպաններուն, որ իրենց երկիրներուն մէջ գտնուող հայկական սփիւռքին հետ գրուցեն՝ ըսելով, որ «հայկական սփիւռքը իրենց սփիւռքն է»:

Սակայն իբրեւ հայ երիտասարդ եթէ մէկ վայրկեան մտածենք, թէ արդեօք այս դէպքը ի՞նչ օգուտ ունեցաւ Զայկական հարցին, ապա հետեւեալ մտորումները կ'ունենանք: Սան Ստեֆանոյի (1878) պայմանագիրէն ետք Զայկական հարցը մեծ պետութիւններուն ձեռքը խաղաքարտ դարձաւ. արդարեւ, արեւմտեան մեծ պետութիւնները երբ լաւ յարաբերութեան մէջ կ'ըլլային Թուրքիոյ հետ, մոռացութեան կը մատնէին Զայկական հարցը, իսկ երբ իրենց երկկողմանի կապերը կը վատթարանային, մեր դատը կրկին դաշտ կը նետուէր: Յիշեցնենք, որ Ֆրանսան 1920-ին Կիլիկիոյ հայութիւնը բռնի կերպով դուրս դրաւ անոր հողերէն: Այս աշխարհին մէջ շահերը տիրական են, ինչպէս անգլիացի լորտ մը ըսած է.

«Չկան յաւիտենական բարեկամութիւններ կամ թշնամութիւններ, կան միայն յաւիտենական շահեր»: Զոս պետք է յիշեցնենք Արամ Մանուկեանի նշանաւոր խօսքը. «Միևակ ենք եւ պետք է ապաւինինք մեր ուժերուն»: Սակայն Ֆրանսա ինչո՞ւ այս քայլը առաւ:



Շատեր կը կարծեն, թէ ֆրանսական նախագահական ընտրութիւններուն մօտալուտ ըլլալուն պատճառով ֆրանսական քաղաքական ուժերը կարիք ունին 500 հազար ֆրանսահայերու քուէներուն, բայց իրականութեան մէջ Ֆրանսայի մէջ կ'ապրին նաեւ 400 հազար ֆրանսացի թուրքեր, ուրեմն այս մէկը ընտրական «խաղ» չէր,

այլ շատ աւելի մեծ բանի մը արդիւնքն էր: Մօտ մէկ ամիս առաջ ֆրանսական-թրքական յարաբերութիւնները զարգացում մը ապրեցան սուրիական հարցին առնչութեամբ. արդարեւ, այս հարցով երկու պետութիւններուն քաղաքականութիւնը շատ կը նմանէր իրարու, եւ երկուքը կը փորձէին ամէն ջանք ի գործ դնել՝ Սուրիոյ մէջ Ասատի վարչակարգը տապալելու նպատակով: Նոյեմբերին Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Ալէն Ժուփէ այցելեց Թուրքիա, եւ իր թուրք պաշտօնակից Ահմետ Տաւութօղլուին հետ տուին միացեալ մամլոյ ասուլիս մը, որուն ընթացքին Ժուփէ յայտարարեց, որ Թուրքիա կարելորդ դերակատարութիւն ունի սուրիական հարցին մէջ: Ան նաեւ ըսաւ, որ Թուրքիա պիտի մասնակցի Եւրոպական Միութեան կողմէ կազմակերպուած Սուրիոյ տագնապին նուիրուած վեհաժողովին, սակայն իրականութեան մէջ Թուրքիա չէր հրաւիրուած այս վեհաժողովին՝ ո՛չ թէ կիպրական վեթոյին պատճառով, այլ որովհետեւ Եգիպտոս դէմ էր Թուրքիոյ մասնակցութեան: Միեւնոյն ատեն Թուրքիա չէր մասնակցած Սուրիոյ եւ Արա-



### ԿԵՏՑԷ ՀՆԴԿԱՅԱԼՈՒ

բական Լիկայի միջեւ կայացած վերջին բանակցություններուն, բան մը, որ Թուրքիոյ իշխանութիւնը զայրացուցած էր: Այս մէկը մեզի կը յիշեցնէ, որ փուշիկը կ'ուռի, կ'ուռի, իսկ երբ յանկարծ ձեռքէդ ձգես կը թռչի եւ կը դատարկուի: Այդպէս ալ եղաւ: Այլ խօսքով, այս բոլորին ետին կայ այն իրականութիւնը, որ արեւմուտքը կ'ուզէ տեսնել Թուրքիա մը, որ կը կատարէ իր հրամանները, եւ ոչ թէ Թուրքիա մը, որ անկախ ու հզօր դեր խաղայ շրջանին մէջ: Կացութեան մէջ ոչինչ փոխուած է, որովհետեւ Թուրքիա տակաւին կը մնայ արեւմուտքին շփացած «հիւանդ մարդը»:

Սակայն ո՞ր է եւ ի՞նչ է մեր տարած յաղթանակը: Հոս պէտք է քննադատական ակնարկ մը ուղղենք հայկական լրատուամիջոցներուն, որոնք միմիայն խօսեցան Ֆրանսայի կողմէ վաւերացած օրինագիծին մասին եւ այս գծով Թուրքիոյ առած քայլերուն, սակայն որեւէ ակնարկութիւն չկատարուեցաւ Թուրքիոյ մէջ արձանագրուած պատմական դէպքին: Նոյն ատեն, երբ Ֆրանսայի պատգամաւորները կը քննարկէին Հայոց ցեղասպանութեան ուրացումը քրեականացնող օրինագիծը, Թուրքիոյ մէջ գտնուող Մարդկային իրաւունքներու կազմակերպութեան Պոլսոյ մասնաճիւղը (IHD) ընդունեց Հայոց ցեղասպանութիւնը եւ հանդէս եկաւ հետեւեալ յայտարարու-

թեամբ. «Եկե՛ք միանա՛նք Ցեղասպանութիւնը ուրացողներուն դէմ, եւ ոչ թէ Ֆրանսայի»: Յիշեցնենք, որ Ապրիլ 24-ին այս կազմակերպութիւնը կոչ ուղղեց թրքական պետութեան՝ ճանչնալու Հայոց ցեղասպանութիւնը: Ա՛լ աւելի հեռու երթալով՝ ան յայտարարեց. «... Ցեղասպանութեան ժխտումը ո՛չ մէկ կապ ունի ազատ խօսքի հետ, ժխտումը ոճրագործութիւն եւ անարգանք է Ցեղասպանութենէն վերապրած յաջորդ սերունդներուն նկատմամբ: Եւրոպական դատական ատենանք եւ Միացեալ ազգերու կազմակերպութիւնը ընդունած է Հայոց ցեղասպանութիւնը»: Թրքական հասարակական կազմակերպութիւնը ո՛չ միայն ճանչցաւ Հայոց ցեղասպանութիւնը, այլ նաեւ ասորականն ու յունականը: Այս մէկը յաղթանակ մըն էր, յաղթանակ մը, զոր կը նուիրենք նահատակ Հրանդ Տիկի ջանքերուն:

Վերջապէս, մինչ Փարիզի մէջ կը քննարկուէր օրինագիծը, թուրք երիտասարդները հայկոյանքներով «կը զարդարէին» ֆէյսպուքի հայկական էջերը, սակայն ամենէն նշանաւոր էր «Հայկական հարցերու» էջին վրայ պատահածը: Թուրք երիտասարդ մը Falih Ciftci անունով, որոշեց այս հայկական էջերուն մէջ հայկական տառերով գրել եւ տեղադրել «Viva turkey» բառին թարգմանութիւնը: Զգիտնալով, որ եթէ Google translator գործածես, բառը կը թարգմանուի՝ «Կեցցե՛ հնդկահաւը», «խելացի» թուրքը այդ թարգմանութիւնը տեղադրեց էջին մէջ: «Կեցցե՛ հնդկահաւը» գրութեան տեղադրումը բաւական մեծ խանդավառութիւն յառաջացուց այդ էջին վրայ...

Այսպիսով, պէտք է տօնական օրերուն կամ տարբեր առիթներու, երբ մեզմէ շատեր կը նախընտրեն հնդկահաւ ճաշակել, չմոռնանք խմելու հայ ժողովուրդին կենացը եւ ըսելու. «Կեցցե՛ հնդկահաւը»:

### ԵՂԻԿ ԹԱՇՃԵԱՆ

ԼԵՄ-ի «Հրայր Դժոխք» մասնաճիւղ



**ԱՉԳԵՐԸ ՉԵՆ  
ՄԵՌՆԻՐ,  
ԱՆՁՆԱՍՊԱՆ  
Կ'ԸԼԼԱՆ...**

**Ե**սասիրություն, ինքնահավանություն, տգիտություն, անտարբերություն, ծուլություն, թուլամորթություն, ապիկարություն... Բառեր, երեւոյթներ, որոնք հարւածներ կը հասցնեն ազգերու գոյատեւման ու յառաջդիմութեան, բայց եւ այնպէս ազգի մահացու հարուածը կու գայ նոր տեսակի անձերէ, նոր երեւոյթէ մը, նոր ծնունդ առած «գաղափարաբանութենէ» մը՝ ԱՄԵՆԱԳԵՏ-ՏԳԵՏ-ներէն եւ ԱՄԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ-ՏԳԻՏՈՒԹԵՆԷ...

Ամենագետ-տգետը նոր տիպի ստեղծագործություն մըն է, որ բաւական երկար ժամանակէ ի վեր ծնունդ առած է մեր ազգին մէջ, բայց եւ այնպէս նոր է, որ կը զգանք անոր վնասները: Ամենագետ տգետը ներկայ է ամէն տեղ, բոլոր դասակարգերու մէջ, դպրոցները, համալսարանները, փողոցը, գործատեղերը... Ամենագետ-տգետը հասած է ամէն տեղ, ուր ազգը ներկայութիւն ունի:

Անոր յատկութիւնները բազմաթիւ են, ինչպէս նաեւ տարբեր ձեւով կ'արտացոլան եւ կը բացայայտուին, բայց եւ այնպէս նմաններու շարքերու ամրապնդման ու իրենց գաղափարի տարածման համար օգտագործուած քարոզչական միջոցները միշտ նոյնը կը մնան:

Հասկցած թէ չհասկցած նիւթերու մասին խօսիլ, առանց տուեալներու քննադատելի աւելի տեղեկութիւն եւ մասնագիտութիւն ունեցողը, ամէն բան հասկցող ձեւանալ... Աւելին, երիտասարդութեան տաքարիւնութեան վստահելով՝ ամենայն բրտութեամբ «լեպ»-ը առնել եւ «լեպլեպու» ընել:

Այսպիսով ամենագետ-տգետը իրեն հետեւիլ կու տայ իր համակիրներն ու շարքայիները՝ կեղծ ու պարարտ նիւթեր, լուրեր շուկայ նետելով եւ արծարծելով, մասնագետ ու գիտուն մարդիկ հարուածելով՝ իր տգիտութեամբ ամենագետ կը ձեւանայ, իսկ աւելի ցաւալին այն է, որ կը խօսի այն մասին, թէ ազգին մեծամասնութիւնը իրեն կը հետեւի...

Ա՛լ չեմ գիտեր ո՞ր կեղծիքն է, որ այս ամենագետ տգետը այսքան հրապուրիչ կը դարձնէ. արդեօք իրենց խօսած լեզուին հարազատութի՞ւնը, «անձնական փորձառութեան» մթութի՞ւնը, հագուածքը, չեմ գիտեր, բայց եւ այնպէս կայ յստակ իրողութիւն մը, որ նմանները կը վայելեն մեծ ժողովրդակալութիւն:

Ամենագետ-տգետը՝ ազգին դահիճը...

Բուժման առաջին քայլը ինքնաճանաչումն ու ախտաճանաչումն է, բայց եւ այնպէս ամենագետ-տգետը իր ամենագիտութենէն լաւատեղեակ է, բայց ցաւալիօրէն ամբողջովին անտեղեակ է տգիտութենէն, հակառակ անոր որ ինքնիր մասին շատ բան գիտէ...

Ան ազգի յառաջդիմութեան հարուած հասցնող բոլոր ածականները կը մարմնաւորէ, եսասեր է, իշխանամոլ, ինքնահաւան, տգետ, անտարբեր (ուրիշին եւ ազգին հանդէպ), ծոյլ (ընդհանրապէս), թուլամորթ եւ ապիկար, բայց եւ այնպէս ճարպիկ բառախաղերով այս բոլորը կը վերագրէ իր «քարիզմա»-ին, նոյնիսկ իր անբան, անիմաստ խօսքերը օգտագործելով՝ հարուածելու ու քարկոծելու համար ազգօգուտ գործերը, առաջարկները, հարցերը:

Անձնական շահերէ, փառամոլութենէ եւ անձնական ոխերէ մեկնած, ինչպէս նաեւ մարդասպան նախանձէ ազդուած, ամենագետ-տգետը կը տանի իր գործունեութիւնը...

- «Դաշնակները ի՞նչ կը հասկնան որ... միայն ջարդել փշրել գիտեն»:
- «ԼԵ՞Մ-ը... Ծխախոտ ծխող, հայիոյող փողոցայիներու հաւաքածոյ մըն է»:
- «Հայութի՞ւն... մեծցեք այլեւս, նոր աշխարհ է, ՄԱՐԴ եղէք»:
- «Հայ դատի մասին կը խօսի... Խելքդ գլուխդ հաւաքէ, գործիդ նայէ, ասոնք փորդ հաց չեն լեցներ»:

Ասոնք պարզ օրինակներ են ամենագետ-տգետին արտայայտութիւններէն եւ գաղափարներէն, որոնք ուղղակի հարուածներ են Հայ դատին, մեր ազգին: Անդին կայ երկրորդ ա՛լ աւելի վտանգաւոր միջոցը, որ միշտ կը սկսի նոյն ձեւով՝ «Դուն ինծի հարցուց, ես գիտեմ»: Այսպիսով ամենագետ-տգետը շէնք շինելու դասեր կու տայ երկրաչափին, «մոթոր»-ին մասին նորութիւններ կը փոխանցէ ինքնաշարժ նորոգողին, միջազգային քաղաքականութենէ կը պատգամէ քաղաքագետին, հայոց պատմու-

թիւն կը սորվեցնէ հայ ուսուցիչին, իսկ երբ համեստ ժողովուրդին գիրկը նստի, այս բոլորը միասին կ'ընէ:

«Ատի ի՞նչ գիտէ որ, «ու իզա» վկայական ունի, «ու իզա» գործն է, դուն ինձի հարցուր, ե՛ս գիտեմ»:

Եւ այս խօսքէն ետք այդ խեղճ ազգասերին կամ գործիչին, կամ խելքը գլուխը մարդուն հասցէին կը սկսին ցեխարձակումները, «դրացիիս ամոյին աղջկան բարեկամին քոյրիկը լսեր է, որ...» Եւ մարդուն ամբողջ բարոյականութիւնը, հաւաստիութիւնը գետնի հաւասար կ'ընէ:

Ամենէն վտանգաւորը եւ մեր ազգին ու անոր յառաջդիմութեան տրուած ծանր հարուածը այն ատեն է, որ ամենագետ-տգետը չի հասկնար... Երկինքը ամբողջ փուլ կու գայ, երբ այս ամենագետ-տգետը ծրագիր մը չհասկնայ, առաջարկ մը չընկալէ, ձեռնարկ մը «աճայիպ» թուի իրեն կամ «խոշին» չգայ... Խոչընդոտներ, հակաքարոզչութիւն, «շինիչ» առաջարկներ, ջղային մթնոլորտ եւ պառակտիչ նիւթեր... Նորանոր ախտեր:

Դժբախտաբար մեր 6 հազար տարուան պատմութեան մէջ մեր ազգի ամենագետ-տգետները այսօր հասած են իրենց փառքի օրերուն, իսկ մեր ազգին «օժանդակելով» ազգի տապալման եւ ոչնչացման կ'օժանդակեն:

Ազգերը չեն մահանար, անձնասպան կ'ըլլան:

Ա. Յ. Բ.

ԼԵՄ-ի «Յայաստան» մասնաճիւղ

**ՀԱՅ ԳԻՐՔԸ**  
**2012-Ը «ՀԱՅ ԳԻՐՔԻ ՏԱՐԻ» ՀՈՉԱԿՄԱՆ ԱՌԻԹՈՎ**

Երկու բառերէ կազմուած այդ խորագիրը՝ «Յայ գիրքը» ուզեցի պատշաճեցնել սոյն յօդուածին հետ: Վստահ եմ, որ եթէ անոր վրայ կատարենք կարճ անդրադարձ մը, առաջին նշմարելի բանը եւ մանաւանդ քննադատելին պիտի ըլլայ այն, որ՝ «խորագիրը շատ չոր ու ցամաք է», «խորագիրը գրաւչութեան ո՛չ մէկ գիծ ունի, այնուհետեւ կը հակասէ յաջորդ յօդուածի մը ամենէն կարեւոր առաջնահերթութիւններէն մէկուն»: Գիտե՛մ, գիտեմ այս բոլորը, սակայն կ'ուզեմ ըսել նաեւ ա՛յն, որ նոյնիսկ ամենէն խելացի խորագիրը, եւ կամ ամենէն հռետորական ճառը, երբ կ'արձածէ այս նիւթը (գիրքի), սակաւթիւ անձերու հոգիներուն մէջ որոշ կայծ մը կրնայ վառել: Այնուամենայնիւ, խուսափեցայ այս գրութեան տալ գրաւիչ կամ խելացի խորագիր մը:

Սկսելու համար նախ կ'ուզեմ ակնարկ մը նետել գիրքի պատմութեան, եւ մասնաւորաբար՝ հայ գիրքի պատմութեան վրայ: Այս տարօրինակ բանը, զոր «գիրք» կը յորջորջենք, մեր մօտ սկսած է գոյութիւն ունենալ Մեսրոպ Մաշտոցի գիրերու գիւտէն (406 թուական) առաջ, բայց ո՛չ հայերէն տառերով: Գիրերու գիւտէն ետք կը սկսի թարգմանչական աշխատանքը, որուն առաջին թարգմանութիւնն էր.

«Ճանաչեմ Չիմաստութիւն եւ Չիրատ. Իմանալ Չբանս Հանճարոյ»:

Եւ այսպէս, մեր անձնուէր վանականները, որոնք ԳՐԻՉ կ'անուանուէին, իրենց ցերեկը գիշերին միացնելով՝ մագաղաթներու վրայ կը սկսին արձանագրել իրենց մտքի հանճարը եւ կամ նոր օրինակներ պատրաստել՝ գոյութիւն ունեցող որեւէ գրական աշխատասիրութեան մը: Այսպէս, գիրքը կը դառնար ո՛չ միայն լուսատու աղբիւր, այլ նաեւ ոգեղէն գոյութիւն մը:

Վրայ կը հասնին թաթարական արշաւանքները՝ արեւելքէն դէպի Կեդրոնական եւ Մերձաւոր ասիաներ: Յայաստան եւս կ'ենթարկուի բարբարոսներու ասպատակումներուն: Եւ ահա՛, մեծ թիւով ձեռագիր աշխատասիրութիւններ հրոյ ճարակ կը դառնան: Բայց եւ այնպէս, մեր ժողովուրդը դարձեալ գիտակցելով անոնց մշակութային գերազանց արժեքին, կը յաջողի անոնցմէ բեկորներ փրկել եւ պահել զանոնք՝ հեռաւոր վանքերու եւ թաքստոցներու մէջ:

Եւ ձեռագիր գիրքեր պատրաստելու ընթացքը կը շարունակուի, մինչեւ Կիւթենպերկեան տպագրութեան գիւտը (1456 թուական), որմէ շուրջ մէկ դար ետք հայկական գիրքեր պիտի սկսին հերթաբար տպուիլ:



Քիչ մը անելի արագ ընթացքով մը եթէ անդրադառնանք պատմութեան, պիտի տեսնենք, որ հայ գիրքի հիմնական դերը եղաւ հայ ժողովուրդը զարթնեցնել իր թմբիրէն: Հարկ չէ երկարօրէն ներկայացնել յեղափոխութեան ժամանակաշրջանը: Սոսկ կ'ուզեմ նշել, որ գիրքին մէջ տեղ գտած մեր պատմութեան սիրանքները եւ առասպելները վերածնունդ ապրեցան մեր ժողովուրդի նոյն միջավայրին եւ նոյն զանգուածին մէջ: Երէկուան ռայա հայը, այսօր դարձաւ ճակատաբար ֆետայի:

Արդարեւ, 20-րդ դարու հայոց պատմութիւնը կարելի է բնութագրել որպէս մեր ժողովուրդի յարութեան եւ մաքառումի ժամանակաշրջան, որ արգասիքն էր մեր ժողովուրդի անանդական բարքի վերածնունդին (քաջութիւն, հայրենասիրութիւն, արժանապատուութիւն եւ այլն):

Ելեկտրոնային այս դարաշրջանը, կրնանք փաստել ըսել, որ տապարի հարուած հասցուց ո'չ միայն մեր առօրեայ կենցաղին, այլ նաեւ հայ գիրքի կարեւորութեան: Ի տարբերութիւն այն հսկայ ձեռագիր մատենին, որ 1915-ին հայոց դէմ գործադրուած Թուրքիոյ Եղեռնագործութեան ընթացքին երկու տարագիր մամիկներու միջոցով հասաւ Արեւելահայաստան, այսօր մեր գիրքերը պարզապէս գրադարանի զարդ դարձած են: Ճիշդ է այն արդարացումը, որ ընթերցանութիւնը կարելի է կատարել համացանցի միջոցով, սակայն կ'ուզեմ մեր ընթերցողներուն փոխանցել հետեւեալ նոր տեսութիւնը.-

Ջերմօրէն կը լսենք, որ երբ որեւէ տեղ մեր Եարխուշտան ու Քոչարին պարենք կամ եկեղեցւոյ շրջափակին մէջ Տեառնդառաջի խարոյկին շուրջ դառնանք, եւ կամ մեր Ռոսիին ու Այվազովսքիին գեղանկարներու պաստառներով զարդարենք մեր շուրջը, եւ կամ երբ մեր տուտուկն ու շուին կը բանեն, ստեղծած կ'ըլլանք մեր «Նոր Հայաստան»-ը: Կը տեսնենք, որ այս բոլոր անանդութիւնները չեն կորսնցներ իրենց ոգեղէն ու խորհրդանշական արժէքները եւ այժմեականութիւնը: Այդպէս ալ պետք է ըլլայ գիրքի պարագան, պետք է գիրքին հետ հաղորդուելու սովորութիւնը ծաղկեցնենք՝ ընթերցանութեան քննարկումի հանդիպումներ մշակելով մեր տուններուն, ակումբներուն եւ դպրոցներուն մէջ: Այսպիսով մենք ո'չ միայն փրկած կ'ըլլանք գիրքի մշակութային արժէքը՝ իբրեւ հինէն մեզի հասած անանդ մը, այլ անելին. անելցուցած կ'ըլլանք նոր օղակ մը՝ մշակոյթի շղթայի շարանին վրայ, որ այսուհետեւ պիտի անուանուի՝

«Ընթերցանութեան Անկիւն»:

**ԳԱՅԼ ՎԱՀԱՆ**

ԼԵՄ-ի «Հայաստան» մասնաճիւղ



## Երկշաբաթեայ դրութեամբ ունկնդրեցէք

**ԼԵՄ-ի «Արծիւ»  
յայտագիրը՝ «Վանայ Ձայն»-էն,  
երեկոյեան 6:30ի լուրերէն  
անմիջապէս ետք:**

## ՌՈՒՔԵՆ ՏԵՐ ՄԻՆԱՍԵԱՆԻ ՄԱՅՈՒՄՆ 60-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ



### Ճշմարիտ ղեկավարը

Մարդկային եւ ազգային այս վսեմ արժանիքը ողբէ հայ պիտի նշմարէր Ռուբէնի մէջ, գէթ եթէ կարողար անոր յուշագրութիւնները՝ եօթը հատորներու մէջ ամփոփուած: Ռուբէն իսկապէս հաւատարիմ մնաց իր նախնիներուն կտակին՝ ղեկավար եզրի կիրարկման գծով: Արդարեւ, Ռուբէն, ինչպէս նախնիները, եղաւ ընդմիշտ պատնէշի առաջին գիծին վրայ: Սուլուխի կռիւին (27 մայիս, 1907) Ռուբէն իր զինակիցին՝ Գեորգ Չաւուշի հետ կանգնած էր կռուի առաջին գիծերուն վրայ: Եւ անոր վճռական հրահանգը՝ ուղղուած զինակից ընկերներուն, ամէն գնով փրկել էր Գեորգ Չաւուշի եւ Սպաղանանց Գալէի մարմինները. «Մենք պիտի փրկենք Գեորգի եւ Գալէի դիակները եւ կամ աւելնանք անոնց վրայ. հակառակ դէպքում, օլուղ չոլուղով զմենդ էլ գետ պիտի թափուիք» արտայայտութիւնը ապացոյց է անոր անդրդուելի կամքին: Տակաւին, 1915-ի Յայոց ցեղասպանութեան ընթացքին Ռուբէն դարձեալ իր ժողովուրդին մօտ էր, անոր գոյապայքարին մասնակից: Այսպէս, եօթը ամիս Սասունի ինքնապաշտպանութեան կռիւներուն Ռուբէն եւս իր մասնակցութիւնը կը բերէ՝ բացայայտելով ճշմարիտ ղեկավարի մը անձնական գերազանց նուիրումն ու զոհաբերութիւնը: Այս մէկը կը վկայէ իր անմիջական գործակիցներէն խմբապետ Մուշեղ Աւետիսեանը, երբ կը նշէ, թէ նահանջի ընթացքին միշտ շատ սակաւ էր հացի պաշարը, Ռուբէն իր բաժինը կը յանձնէ ուրիշներուն՝ յայտնելով, թէ ինք կը բաւարարուի ծխախոտով: Եւ տակաւին շատ օրինակներով կարելի է ցոյց տալ այս մարդուն իսկայութիւնը:

Ներկայ ժամանակաշրջանին մեր առօրեայ կեանքին մէջ անձնական եւ ընկերային կեանքի հոգերը, ինչպէս նաեւ համաշխարհային, տնտեսական եւ քաղաքական կեանքի մակընթացութիւններն ու տեղեկատուութիւնները շատ յաճախ մեզ կը կլանեն իրենց անհունութեան մէջ, եւ, բնականաբար, անցեալի արժանիքներու լոյսը կը շիջի ի սպառ: Եւ այսպէս, կամաց-կամաց, մարդոց մօտ կը սկսի խզուիլ ոգեղէն եւ հոգեւոր կապուածութիւնը անցեալի փառքերուն, ինչպէս նաեւ, իրենց կենցաղին հետ:

Այդուհանդերձ, լիբանանահայ գիտակից երիտասարդութիւնը միանգամընդմիշտ կու գայ քանդելու անցեալի մեր հարստութիւնները մոռացումի եւ ճահճացումի ենթարկող պատերը: Առ այդ, կու գանք այսօր վերապրեցնելու մեր ազգի յեղափոխական պատմութեան ամենէն փայլուն դէմքերէն մին՝ Ռուբէն Տեր Մինասեանը (Մինաս Տեր Մինասեան), որ համարեայ ամբողջ կեանքը անսակարկօրէն նուիրեց իր ազգին:

Եթէ ուզենք խօսիլ Ռուբէնի անձը մարմնաւորող արժանիքներուն մասին, ապա կարելի է գանոնք ամրագրել երեք իւրայատկութիւններով՝ ճշմարիտ ղեկավարը, հանճարեղ գրչի մարդը եւ աշխարհահայեաց անձնաւորութիւնը:

### Հանճարեղ գրչի մարդը

Իրապէ՛ս, կարելի է ըսել, թէ Ռուբէն մեր այն քիչ յեղափոխականներէն եղած է, որ կարողացած է մեր ազգին յեղափոխական պատմութիւնը առարկայական եղանակով եւ ոճով անմահացնել եւ յաւերժացնել: Անոր յուշագրութիւններուն հիմնական առանցքը կը կազմեն երկու գլխաւոր նիւթեր. առաջին՝ ներկայացուցած է տեսութիւններ եւ պատմական իրադարձութիւններ, իսկ երկրորդ՝ անմահացուցած է մեր ազգին հերոսներն ու հերոսական դէպքերը: Ինչպէս որ Կոմիտաս վարդապետ յաւերժացուց մեր հայկական աւանդական-գեղջական երգերը՝ գանոնք գրի առնե-




լով, ապա կարելի է ըսել, թե Ռուբենի յուշագրությունները մաս կը կազմեն մեր ժողովուրդի յեղափոխական մշակոյթին եւ դիմագիծին, որոնք յաւերժացան անոր շնորհիւ: Այսպէս, ան անդրադարձած է Կարս շրջանի կարեւորութեան, ներկայացուցած տեսութիւններ՝ յեղափոխականութեան հասկացողութեան շուրջ, նկարագրած է Վանի, Տարսնի, Ախլաթի, Էրզրումի եւ այլ յեղափոխական հնոցները ու անոնց կարեւորութիւնը. տակաւին, խօսած է հայ կղերականներու եւ խոնարի յեղափոխականներու մասին:

**Աշխարհահայեաց մարդը**

Ռուբենի քաջութեան եւ ռազմական արժեքին կողքին տակաւին նկատելի է անոր աշխարհահայեցողութիւնը: Ան, օրինակ, ո՛չ միայն բաւարարուած է յեղափոխական պատմութիւնը գրի առնելով, այլ ակելին. յաջողած է ամէն երեւոյթի տալ ինքնուրոյն տրամաբանական բացատրութիւն եւ վերլուծում: Այսպէս. ան մատնանշած է Կարսի ուրոյն դերակատարութիւնը՝ յեղափոխական գործին մէջ, հասկցած է հայ գիւղացիին, ֆետայիին եւ կղերականին հոգեմտաւոր աշխարհը: Ներկայացուցած է քիւրտ տգետ խաւի եւ խաներու կենցաղն ու մտածողութիւնը: Զուսկ, կարողացած է հարազատ պատկեր մը տալ պոլսահայ մտաւորականութեան եւ մանաւա՛նդ «երիտասարդ թուրքերու» ճշմարիտ դիմագիծին:

Միւս կողմէ, Ռուբենի աշխարհահայեցողութեան կարեւորութեան ներկայացումը կիսաւարատ պիտի մնայ, եթէ նաեւ չմատնանշենք անոր իմաստուն եւ հեռատես քաղաքականութիւնը՝ Նորածին Հայաստանի Հանրապետութեան ծիրին մէջ: Ան լաւապէս գիտակցեցաւ, որ Հայաստանի օրուան բնակչութեան 30 առ հարիւրը կը կազմէր թուրք եւ թաթար ցեղը, որ այնուամենայնիւ բնակութիւն հաստատած էր Հայաստանի հողին մեծ մասին վրայ: Եւ այսպէս, ըլլալով ներքին գործոց եւ պաշտպանութեան նախարար (1919 թուական), կը ձեռնարկէ հայկական շրջաններու ազատագրումին՝ թուրք-թաթար տարրերէն, եւ այսպիսով կ'երաշխաւորէ երկրի գոյութեան պահպանումը: Ու ահա՛, ան կը դառնայ Հայաստանի պետականութեան կազմութեան հիմնաքարերէն մին:

Այս մարդկային առաքինութիւնները մաս կը կազմեն Ռուբենի նկարագիրին: Անոր մահուան 60-ամեակին առիթով ուզեցինք կեդրոնանալ ո՛չ այնքան իր կենսագրականին, որքան իր անձին



հսկա - յութեան եւ արժանիքներուն վրայ: Ռուբեն իր մասնակցութիւնը բերաւ հայ ժողովուրդի պատմութեան եւ գոյապայքարին՝ երեք հանգրուաններու ընթացքին՝ Արեւմտահայաստանի մէջ յեղափոխական գործունէութիւն ծաւալելով, հայոց պետականութեան ամրագրման հիմնասիւններէն մին հանդիսանալով եւ աշխարհատարած հայութեան կազմակերպման իր մասնակցութիւնը բերելով:

Եզրափակելու համար կ'ուզենք ըսել, որ Ռուբենի անձը օրինակն է մեր յեղափոխական պատմութեան մէջ ապրած ու գործած այն հարիւրաւոր անձնուէրներէն, որոնք իրապէս կարելի է անուանել մեր ժողովուրդին սուրբերը: Անոնց կեանքն ու արժեքը դժբախտաբար այսօր կը մնան միայն գիրքերու ու արխիւներու մէջ, անհաղորդ՝ Նորահաս սերունդին հետ, որ կլանուած է համաշխարհայնացման եւ նիւթապաշտ կեանքի «փառք»երով:

Հայ պատանի եւ երիտասարդ, կեանքի՛ կոչէ, վերապրեցո՛ւր անցեալի փառքերն ու հարստութիւնները, որպէսզի չմօտենայ ժողովուրդիդ հոգեվարքի օրը:

**ՍԱՍՈՒԷԼ ՖԱՅՆ**  
*ԼԵՄ-ի «Հայաստան» մասնաճիւղ*



## ՌԱԶՄԻԳ

# ԼԵՌՆԱՅԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՅԱՄԱՐՏԸ

### Ա. ՄԱՍ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱԶԴԱԿՆԵՐ (Երկրորդ բաժին)

#### Յաղթական կամքը

Յաղթանակը կը տարուի դեռ կռիւը չսկսած՝ նախ բարոյապէս, նախ հոգիներու մէջ: Կռիւը միջոց է միայն՝ շօշափելի արտայայտութիւն տալու մեր ներքին վստահութեան, մեր ներքին յաղթանակին:

Վճռէ՛ յաղթել, թէ ինչպէ՛ս, բախտիդ թողէ: Բոլոր յաղթողները, զօրավար թէ զինուոր, ճակատագրապաշտ եղած են: Կը յաղթէ կոյր, բայց հրաշագործ հաւատքը: Պէտք է յաղթել, պէտք է յաղթել գոյութեան իրաւունքը չկորսնցնելու համար:

Տեղի տալ կը նշանակէ ե՛լ բարոյապէս ոչնչանալ: Ուրեմն միշտ յառա՛ջ, վախկոտ փոքրագութիւնը չի փրկեր քեզ: Եւ ո՛չ մէկ քայլ յետ: Կա՛մ յաղթութիւն, կա՛մ յաղթական մահ:

#### Մահուան անգիտակցումը

Մահ չկա՛յ: Յաղթելով անոնք՝ մահն արհամարհող խիզախները, պատերազմներու քմահաճ Աստուծոյ ցանկութեամբ կա՛մ կենդանի կը մնան, կա՛մ կ'իյնան քաջերու մահով - կ'անմահանան: Մահ չկայ Փառքի դաշտի վրայ ինկած քաջին համար, որովհետեւ անոր սխրագործութիւններու արձագանգը յաւերժօրէն պիտի ապրի իր ժողովուրդի սրտին ու երգին մէջ:

Մահ չկայ անոր համար, որ գիտէ հեզնել մահը, որովհետեւ սերունդները հպարտութեամբ պիտի վկայեն, թէ ո՛վ ինչպէ՛ս խիզախեցաւ ու ինկաւ:

Մահ չկայ, կը մեռնի փոքրագին, վախկոտը, մեռածը կը մեռնի:

Մահը անգիտակցող խիզախներուն համար չկա՛յ մահ: Քաջերու յարութիւնն է մահը:

#### Ղեկավարութիւն

Ղեկավարները կա՛մ կը նշանակուին, կա՛մ կը յայտարարուին: Մէկը կը կատարէ այն, ինչ որ կը համարէ հնարաւոր: Միւրը՝ իրեն հետեւող զօրքին թէ ժողովուրդին կը ներշնչէ անկարելին կարելի դարձնելու հզօր եւ հրաշագործ հաւատքը:

Մէկը ինքնիրեն պատասխանատու կը համարէ միայն ձեռնական օրէնքներու եւ իշխանութեան առջեւ: Միւրը՝ նաեւ իր խղճին եւ պատմութեան առջեւ:

Առաջինը կարող է ճարպիկ ռազմավար ըլլալ: Վերջինը՝ նաեւ *Ֆանատիկոս* է, վտանգը անգիտակցող, մահը արհամարհող զինուոր, որ գիտէ վարակել անձնական օրինակներով եւ թելաւորել հայրենասիրական վսեմ գաղափարներով ու պատկերներով եւ հերոսական խոյանքներու մղել:

Մեղմ ասած՝ մէկը գործող է, միւրը՝ ստեղծագործող: Ղեկավարը - այդ ինքը զօրքն է:

Գրեթէ միշտ լաւ է, մարտունակ է զօրքը, եթէ այդպէս է անոր ղեկավարը:

Յաղթական չէ այն զօրամասը, եթէ անոր ղեկավարը պատանհի պէս ոգեւորուիլ եւ Պոնափարթի պէս ոգեւորել չի գիտեր: Անպէտք է այն զօրամասը, որուն ղեկավարը հրամայել չի գիտեր: Որքան զգալի է հրամանին մէջ երկաթն ու կրակը, այնքան սիրով ու հեշտութեամբ զօրքը կը կատարէ տրուած հրամանը:

#### Դաւիթբեկեան զինուոր

Սիւնիքի զինուած զիւղացիութիւնը շատ հեռու էր, արդիական իմաստով, կանոնաւոր զօրք ըլլալէ, սակայն գիտակցական կարգապահութիւնը աւելի քան օրինակելի էր անոր մէջ:

Չօրաշարքի մէջ, ռազմափորձերու եւ կռուի ժամանակ միայն նկատելի էր մէկուն ղեկավար, միւ-



սին զինուոր ըլլալը, երբ մէկը կը հրամայէ, իսկ միւսը կը հրամայուի, կ'ենթարկուի: Խաղաղ պայմաններուն անոնք, զինուոր եւ ղեկավար, կը մնային որպէս զինակից ընկեր:

Ժողովուրդի սերը - անոնց բարոյական միակ վարձատրութիւնն էր:

«Կ'երթանք յաղթելու», - հրաժեշտի ժամուն կ'ըսէին Դաւիթբեկեանները եւ հացի ու ռազմամթերքի անբաւարար պաշարով կը շարժէին դէպի թշնամին: Իր յարձակողական խոյանքներու ժամանակ ասպետ էր սիւնեցին, ինքնապաշտպանութեան դէպքի ընթացքին՝ անխնայ, բայց ոչ վայրագ:

Առաջինը յարձակման, վերջինը նահանջի ժամանակ: Միշտ պատրաստ յարձակելու, հարուածելու, ան մեռնիլ գիտեր այնպէս, որ հայրենի հողը չամչնայ իր դիակը գրկելէն: Անոր նշանաբանն էր՝ յանուն Չայրենիքի Դաւիթբեկաբար:

**Ժողովրդական վաշտապետը**

Սիւնիքի մէջ ամէն գիւղ իր վաշտը ուներ, ուրեմն եւ իր վաշտապետը: Այդ մեր գիտցած *կաստայ*-ական զինուորականը չէ, գլուխը լեցուն զանազան մեռեալ կանոններով եւ տեսութիւններով: Իր որոշ առաքինութիւններով ժողովուրդին մէջ աչքի ինկած երիտասարդ է ան, կռիւներուն անուն հաւած արի զինուոր, հայրենի դար ու դաշտերուն ծանօթ նախկին որսորդ կամ ժողովրդական սպայ, որ զինուորական անպետք կանոնագրերու փոխարէն իր կրծքին տակ ազգասիրութեամբ ու անձնուիրութեամբ զեղուն տաք, հարուստ, խիզախ սիրտ մը ունի:

Կռուի արուեստը ան իւրացուցած է գիրքերէն դուրս՝ կռուի դաշտին վրայ: Կռիւը անոր համար ոչ *տամայի* խաղ է, ոչ ալ թուաբանական խնդիր այլ բարոյական ուժերու կատաղի բախում մը, արնոտ *տրամա* մը, որուն մէջ առաջին դերերը կը կատարեն բոցավառ զգացումը եւ յաղթական մահը: Անոր համար ալ ան իր զինուորներու դաստիարակութեան գործին մէջ զգացումներու մշակումը կը գերադասէ ձեռքերու, ոտքերու, անգամ բանականութեան մարզանքներէն:

Միայն այն իրաւունքը ունի դէպի վտանգ ու մահ առաջնորդելու ուրիշներուն, որ ինքը եւս չի խուսափիր մահէն: Միայն ղեկավար չէ ան, այլեւ զինուոր, որուն շատ անգամ կարելի է տեսնել կրակի գիծին առջեւ, բռն մը խիզախներուն հետ: Իր զինուորները կը սիրէ իր անձին պէս եւ ոճիր կը համարէ կռուի արուեստը իր ժողովուրդի կաշիին վրայ սորվիլը: Իր երկու զինուորները փրկելու համար՝ ան միշտ պատրաստ է հեզնելու մահը, համոզուած, որ իր վիրաւորուելու կամ սպաննուելու դէպքի պարագային՝ երկուքէն մէկը կ'անցնի իր տեղը: Կռիւը՝ յաղթութիւն, մահը՝ յարութիւն է անոր համար:

**Զօրաւոր խօսքը**

Արդեօք եւ միակ տեղն է կռուադաշտը, ուր ամէն բանէ աւելի եւ ամէն բանէ սուր կը զգացուի բարոյապէս ազդելու՝ մտքերու, սրտերու եւ կամքերու վրայ իշխելու կարիքը:

Կարենալ բռնակալօրէն իշխել հոգիներու վրայ - ահա ղեկավարին ամենամեծ ու ամենէն անհրաժեշտ կարողութիւնը, առանց որուն զօրանցն ու մարգադաշտը զինուորներէն յաղթանակներ ստեղծելու կարողութենէն շատ հեռու են:

Այն, ինչ որ յաճախ կը դժուարանայ կատարել արդիական հեռաձիգ թնդանօթը, հեշտութեամբ կը կատարէ ղեկավարի զօրաւոր խօսքը: Խօսքը՝ երբեմն հրամայող ու իշխող, երբեմն՝ կանչող ու մղող, խօսքը՝ միշտ պատկերաւոր ու սեղմ, սրտերուն՝ կրակ, բազուկներուն՝ թափ, կամքերուն՝ մղում տուող խօսքն է իշխելու եւ վարելու միակ միջոցը: Եւ որքան զօրաւոր, այնքան մեծ է անոր հմայքը, այնքան ընդարձակ՝ տիրապետութիւնը:

Խօսքը - այդ ինքը ղեկավարն է:

Յաղթելու համար քիչ է խելքը, տաղանդը, պետք է եւ զօրաւոր խօսք:

Առանց զօրաւոր խօսքի՝ բուրբ են սուրբերը, թոյլ՝ բազուկները, անվճռական՝ կամքերը: Առանց զօրաւոր խօսքի՝ չկայ իշխանութիւն հոգիներու վրայ, իսկ առանց այդ իշխանութեան՝ չկայ յաղթութիւն:

**Վերջ Ա. մասին**

**Պատրաստեց՝ ՄՅԵՐ**  
ԼԵՄ-ի «Չայաստան» մասնաճիւղ

# ՄԵՐ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԱՇՔ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ ԾՆՈՂ

Հայկական ժողովրդական երգարուեստը, երաժշտական ժամանակակից երեւոյթներուն եւ ելեկտրոնային արդի նուագարաններու տարածումին լոյսին տակ, արդէն իսկ վտանգուած է: Բաջ գիտենք, թէ սփիւռքի մէջ, դժբախտաբար, մեր սերունդին մեծ մասը ունկնդիր չէ հայկական ժողովրդական կամ աշուղական երգերու, ո՛չ ալ ծանօթ է այս երգարուեստը ներկայացնող եւ հնչեցնող նուագարաններուն, որոնք շատ մեծ արժէք կը ներկայացնեն մեր մշակութի գանձարանին մէջ՝ ունենալով դարերու պատմութիւն եւ հոգեհարազատ հնչողութիւն:



Հայկական ամենէն հին եւ ամենէն սիրուած փողային նուագարաններէն է տուտուկը կամ ծիրանափողը: Ամենէն հինը, որովհետեւ ան ունի աւելի քան 1500 տարուան պատմութիւն, իսկ ամենէն սիրուածը, որովհետեւ ան իր նուրբ ու տխրամած ձայնով եւ իր քնարերգական կախարդական հնչողութեամբ կ'արտայայտէ հայ ժողովուրդի դարաւոր ցաւի եւ տառապանքի զգացումներն ու յուզումները, կը ներշնչէ հոգեկան հանգստութիւն ու խաղաղութիւն: Տուտուկը շինուած է ծիրանենիի փայտով, ունի լայն լեզուակ մը, մէկ ձայնային անցք եւ տասը օղանցքի ծակեր: Ընդհանրապէս երկու տուտուկահարներ միասնաբար կը նուագեն. մէկը կը մեկնաբանէ հիմնական եղանակը, իսկ միւսը մէկ ձայնի վրայ տամ կը պահէ, մեղեդիներուն ներդաշնակութիւնը պահելու համար:

Այս նուագարաններու ընտանիքին մաս կը կազմեն նաեւ հովուական սրինգն ու շուին, որոնք փայտէ եղեգէ եւ կամ նուրբ մետաղէ պարզ խողովակ ունին, ինչպէս նաեւ ութէն մինչեւ տասը օղանցքի ծակեր: Ի տարբերութիւն սրինգին, որ քաղցր ու մեղմ երանգ ունի, շուին ունի ձայնարձակ լեզուակ մը, անոր համար ալ անոր ձայնը աւելի սուր կը թուի մեր ականջներուն:

**«Ու զուռնայի փողն է դառնում  
Թէ՛ աջ ու ձախ,  
Թէ՛ վար ու վեր,  
Մարդիկ օղուն գինիին խառնում  
Ու մոռացած դարդ ու ցաւեր՝  
Յանձնում են ուրախութեան»:**

**Պարոյր Սեւակ  
«ՂՕՂԱՆՋ ՀԱՐՍԱՆԵԿԱՆ»**

Չուռնան, հայկական ժողովրդական ամենէն տարածուած նուագարաններէն մէկը կը նկատուի: Փայտէ շինուած այս ճշարձակ նուագարանը ընդհանրապէս կը հնչէ խրախճանքներու եւ ուրախ առիթներու ատեն՝ իրեն հետ ունենալով իր անբաժան ընկերը՝ տիւղը, որ շատ տարածուած հայկական հարուածային գործիք մըն է, ընդհանրապէս ընկոյզի փայտէ շինուած:

Ինչ կը վերաբերի ժողովրդական լարային գործիքներուն, անոնցմէ քանի մը հատը միայն զուտ հայկական են, մնացեալը՝ հայկականացած:

Չուտ հայկական նուագարաններու շարքին մաս կը կազմէ չունգուռը, որ մեր աշուղներուն ամենէն սիրած նուագարանը եղած է: Ունի պարզ կազմուածք եւ չորս լարեր: Անոր ձայնը մեղմ ու տխրամած է: Չունգուռին աւելի մեծ եւ զարգացած տեսակը սազն է, որ նոյնպէս զուտ հայկական ժողովրդակա-




Նացած նուագարան է: Ան կազմուած է ութ լարերէ, իւրաքանչիւր ձայն կը նուագուի գոյգ լարերով, կտնոցի միջոցաւ: Այս գոյգ նուագարանները կը գործածուեն յատկապէս գիւղացի աշուղներուն կողմէ:



Կան նաեւ օտարամուտ լարային գործիքները, որոնք մինչեւ այսօր կը գործածուին հայկական ժողովրդական երգերուն մեկնաբանութեան զուգահեռ: Անոնց մաս կը կազմէ թառը, որ պարսկական շատ յայտնի նուագարան մըն է եւ ունի վեցէն ութ մետաղեայ լարեր: Նուագողը գայն կը գրկէ ձախ ձեռքով, աջին ունենալով ոսկորէ շինուած կտնոց մը:

Նուագարանը հասած է Հայաստան եւ կը շարունակուի գործածուիլ մինչեւ օրս:

**«Ամեն սագի մեջը գոված,  
դուն թամամ դասն իս քամանչա  
Նաքաս մարդ քիզ չի կանա տեսնի,  
դուն նրա պասն իս քամանչա  
Ղաստ արա՛, էլ լաւ օրերուն  
Էտիւղն հասնիս քամանչա  
Քիզ ինձնից ո՞վ կարա խըլի,  
աշուղի բասն իս քամանչա»:**



Այսպէս է, որ Սայաթ Նովա իր հիացումն ու սերը արտայայտած է իր սրտին ամենէն մօտիկ նուագարանին՝ քամանչային նկատմամբ: Քամանչան շինուած է թթենիի փայտով: Չայն կը նուագեն աղեղով, ծունկի վրայ դրուած: Ունի շատ նուրբ եւ տխրամած ձայն:

Արեւմտահայ աշուղները Թուրքիայէն բերած են սեղանաձեւ եւ բազմաթիւ ձկան թելէ պատրաստուած լարեր ունեցող քանոնը, որ փայտէ շինուած է: Անոր ուսուցումը կը կատարուի մեծ խնամքով եւ ուշադրութեամբ: Ան կը նուագուի մասնաւոր մետաղեայ մատնոցներով եւ նուագի ընթացքին կարելի է կէս դուն բարձրանալ կամ իջնել անոր վրայ գտնուող բանալիներուն միջոցաւ: Այս նուագարանը մեծ դեր կը կատարէ ժողովրդական նուագախումբերուն մէջ, ինչպէս նաեւ կը գործածուի որպէս մենանուագի գործիք:

Քանոնի նման է նաեւ եռանկիւն փայտէ լարաւոր նուագարանը՝ սանթուրը: Անոնք նոյնանման են կառուցուածքով՝ հնչողութեամբ, սակայն ի տարբերութիւն քանոնին, սանթուրը կը նուագուի գոյգ փայտէ մրճակներով:

Վերոյիշեալ նուագարանները, իրենց բոլոր յատկութիւններով, եթէ միասնաբար հնչեն, կը գործեն այն գեղեցիկ հրաշքը, որ կը կոչուի հայկական երաժշտութիւն: Ինչպէս գիտենք, լաւ եւ որակաւոր երաժշտութիւնը կ'ազնուացնէ մարդու հոգին: Արդարեւ, հայ երգն ու երաժշտութիւնը, որոնք հայ մշակոյթի մեկ անբաժանելի, կարելոր եւ պատուաբեր մասը կը նկատուին, կերտուած են հոգեկան բարձր արժանիքներ ունեցող մեր ժողովուրդին կողմէ՝ այսպիսով արտայայտելով անոնց վիշտը, բերկրանքը, սերը, երազանքը եւ հոգեկան բոլոր ապրումները: Անոնք տարիներու ընթացքին պահպանուած ու գոյատեւած են ժողովրդական նուագարաններու միջոցաւ, եւ մենք պարտաւորուած ենք ո՛չ միայն զանոնք պահպանելու՝ մեր տուններուն մէջ եւ բեմերուն վրայ հնչեցնելով, այլ նաեւ մեր պարտքն է զանոնք տարածել եւ ծանօթացնել համայն աշխարհին:

**ՎԱՐԱՆԴԱ ԵԱԳՈՒՊԵԱՆ**  
*ԼԵՄ-ի «Շուշի» կորիզ*

# ՏԵՂԵԿԱՏՈՒ

## ԼԵՄ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ՄԻՋԴՊՐՈՑԱԿԱՆ ԶԱՅԿԱԿԱՆ ԻՐԱՅԱՏՈՒԿ ԵՐԵԿՈՅ

Կազմակերպութեամբ ՀՀԴ Լիբանանի երիտասարդական միութեան, 25 փետրուար 2012ին՝ ժամը 8:00-էն սկսեալ Համազգայինի Մ. Ե. Հ. Արսլանեան Ճեմարանի սրահին մէջ տեղի ունեցաւ հայկական մտերմիկ եւ իւրաքանչեւ երեկոյ մը:



Կազմակերպիչներուն անունով բացման խօսք արտասանեց Հրակ Աւետանեան, որ անդրադարձաւ այս ձեռնարկի կարեւորութեան ու անոր պատգամին: «ԼԵՄ-ին համար հայապահպանումը առաջնահերթութիւն է, եւ ան ամէն ինչ կ'ընէ այդ իմաստով, որպէսզի պահպանուի մեր ինքնութիւնը», ըսաւ Աւետանեան եւ կոչ ուղղեց ներկաներուն՝ հպարտանալու մեր ինքնութեամբ, երգելու մեր զուլալ երգերը, պարելու մեր ազգագրական պարերն ու պահել-պահպանելու մեր հարուստ մշակոյթը:

Անդրադառնալով լիբանանահայ աշակերտութեան եւ հայապահպանման իմաստով անոր ունեցած դերակատարութեան՝ Աւետանեան ըսաւ. «Դո՛ւք էք մեր ազգի ապագան ու սրբազան դատին պաշտպանը»: Նշենք, որ ձեռնարկը մէկ յարկի տակ համախմբեց Լիբանանի հայկական թէ օտար վարժարաններէն շուրջ 450 հայ աշակերտներ, որոնց «հիւրասիրուեցաւ» միմիայն հայկականութիւն:

Բացման խօսքէն ետք, ցուցադրուեցաւ դաստիարակչական տեսերիզ մը, որ ծանօթացուց ներկաները ՀՀԴ ԼԵՄ-ին ու անոր տարած աշխատանքներուն: Տեսերիզը կ'ընդգրկէր զանազան նիւթեր՝ ԼԵՄ-ի ծնունդէն մինչեւ զինչեւ պայքար, Լիբանանի քաղաքացիական պատերազմի ու Արցախի ազատագրական պայքարի ընթացքին ԼԵՄ-ականներուն ունեցած ներդրումը, ցուցաբերած խիզախ կեցուածքը, միութեան տուած նահատակները, ինչպէս նաեւ անոր վարած հակաթուրք ու հայապահպանման ծրագիրները՝ հասնելով մինչեւ Հայաստանի մէջ «Անուշ Հայրենիք» ընկերային դաստիարակչական ճամբար:

Մինչեւ երեկոյեան ուշ ժամեր աշակերտները՝ իրենց մէջ ամրապնդելով ազգային շունչն ու ոգին, պարեցին հայկական տարբեր շուրջպարեր ու երգեցին մեր ժողովրդային, գաւառական ու ազգային երգերը: Անոնք համոտեսցին մեր պապենական խոհանոցը՝ «Հայկական Է, պատուական Է» մօտեցումով «համեմուած»:

Նշենք, որ երեկոն հարուստ էր զանազան անակնկալներով ու նուէրներով, որոնք ա՛լ անելի ճոխացուցին սրահին մէջ տիրող մթնոլորտը:

Ուրախութիւն եւ գոհունակութիւն է տեսնել, որ ԼԵՄ-ը կը շարունակէ իր հայապահպանման ու հայակերտումի ծրագիրները, իր թիրախը ընդլայնելով եւ հասնելով մինչեւ օտար վարժարաններ յաճախող հայ աշակերտներուն, անոնց առիթ տալով ապրելու հայ ըլլալու աննման զգացումն ու հպարտութիւնը: ԼԵՄ-ը անգամ մը եւս եկաւ կամուրջ մը հանդիսանալու սփիւռքի եւ Հայաստանի միջեւ՝ հայ աշակերտութիւնը կապելով մայր հայրենիքին:

Հայկական երեկոն աւարտեցաւ ԼԵՄ-ի կողմէ ապագայի նման անակնկալներու ու ծրագիրներուն խոստումով:

## ՀՀԴ ԼԵՄ. ՊՐԵՕՎԷԻ ԸՆՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԳԵՐԱԶԱՆՑ ԱՐԴԻՆՔ ԱՊԱՅՈՎԱԾ ԱՇԿԵՐՏՆԵՐՈՒ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄ

Կազմակերպութեամբ ՀՀԴ ԼԵՄ-ի Կեդրոնական վարչութեան, 24 փետրուար 2012-ին, երեկոյեան ժամը 7:30-ին, «Ազդակ»-ի «Փիւնիկ» սրահին մէջ տեղի ունեցաւ 2010-2011 տարեշրջանի պրեզիդէնտի պե-



տական քննություններուն գերազանց արդիւնք ապահոված աշակերտներու պաշտօնական պարգեւատրում:

Լիբանանի եւ Հայաստանի քայլերգներուն ունկնդրութենէն ետք, ԼԵՄ-ի անուով ձեռնարկի բացման խօսքը արտասանեց Փաթիլ Գալուստեան, որ ներկաներուն յիշեցուց Գարեգին Նժդէի հեռատես պատգամը՝ «Ուզո՞ւմ ես գուշակել, տեսել, մի ժողովուրդի ապագան, նա-յի՛ր նրա երիտասարդութեան»:



Ան շնորհաւորեց բոլոր աշակերտները եւ շեշտեց, որ հայ դպրոցը, ուսուցիչը, ընտանիքն ու եկեղեցին մեծ նպաստ ունին այս յաջողություններուն հասնելու աշխատանքին մէջ:

Գալուստեան աւելցուց. «Մեր հաւաքական կեանքին մէջ իւրաքանչիւր հայ կրթական, քաղաքական, մշակութային, կրօնական, մարզական կամ այլ կազմակերպութիւն, ինչպէս նաեւ լրատուամիջոցներն ու մամուլը զօրաւոր ազդակներ են, որոնք կը կերտեն հայ մարդը եւ հայապահպանման կը նպաստեն սփիւռքի մէջ, ուր համաշխարհայնացման փոթորիկը պատրաստ է կլանելու ազգային արժէքները արհամարհող բոլոր անգիտակից ու անպատասխանատու անհատները»:

Ապա գեղարուեստական յայտագիրի առաջին բաժնով Քրիսթին Սրապոնեան ասմունքեց ժազ Ս. Յակոբեանի «Լուսաբաց»-ը, որմէ ետք խօսք առաւ օրուան պատգամախօսը՝ Ազգային Եղիշէ Մանուկեան քոլեճի տնօրէն Չոհրապ Ղազարեան:

Վերջինս անդրադարձաւ սերունդներու դաստիարակութեան հարցին՝ զգուշացնելով ներկաները եւ նշելով, թէ «վայ այն ազգին, որուն երիտասարդութիւնը չէ գինուած ուսումով եւ գիտութեամբ»:

Պատգամախօսը յիշեցուց, որ տարագրութեան դժնդակ օրերուն իսկ մեր գաղթածախներուն մէջ բացուեցան հայկական դպրոցներ, որովհետեւ անոնք հիմնական դեր ունին՝ ազգապահպանման ու հայակերտման հոլովոյթին մէջ: Ան միաժամանակ անդրադարձաւ հայ դպրոցին դիմագրաւած դժուարութիւններուն եւ մարտահրաւերներուն՝ «համակարգիչի կոճակներու դարուն» եւ համաշխարհայնացման հոսանքի սպառնալիքներուն դիմաց:

Չոհրապ Ղազարեան նաեւ խօսեցաւ օտար վարժարան յաճախելու հոսանքին մասին, որ յաճախ կ'արդարացուի ոչ արդարացի պատճառներով՝ անտեսելով անոր հեռաւոր ակերները:

Ղազարեան աշակերտները հայկական վարժարան ուղարկելը սեպեց պարտաւորութիւն:

Անդրադառնալով ՀՀԼԵՄ-ի որակաւոր եւ մասնագիտացած մարդուժ պատրաստելու աշխատանքին՝ Ղազարեան նշեց, որ «քաջալերելի է տեսնել, որ ԼԵՄ-ը Հայ դատը ծանօթացնելու առումով քարոզչական ձեռնարկներու կազմակերպումով չի սահմանափակուիր, այլ երիտասարդական եւ ուսանողական կեանքի տազնապներուն իրազեկ ըլլալով, տարբեր ձեռնարկներով կը քաջալերէ երիտասարդները, որպէսզի շարունակեն իրենց ուսումը: Ի վերջոյ Հայ դատի երկարաշունչ ու ծանր աշխատանքներուն մէկ մասը կը ծանրանայ կենսալից ուսանող-երիտասարդներուն ուսերուն»:

Խօսելով ձեռնարկին մասին՝ Չոհրապ Ղազարեան ըսաւ. «Ազգօգուտ այս նախաձեռնութիւնը այսօր կը համախմբէ մեզ՝ պատուելու համար հայ վարժարանի հայ աշակերտը, որ իսկապէս ալ պատին է հայ ազգին՝ հայրենիքի եւ մանաւանդ սփիւռքի մէջ»:

Գեղարուեստական յայտագիրի երկրորդ բաժնով ելոյթ ունեցան «Կարապալա» քառանդամ խումբին անդամները՝ Ալին Նազգաշեան (երգչուհի), Հրակ Գարագաշեան (կիթառ/երգիչ), Հրակ Տեմիրճեան (ջութակ) եւ Արամ Փափագեան (հարուածային), որոնք նուագեցին շարք մը հայկական սիրուած երգեր՝ արժանանալով ներկաներուն բուռն ծափահարութիւններուն եւ ողջոյններուն:

Ապա կարդացուեցաւ պարգեւատրուող աշակերտներուն անուանացանկը. անոնք ստացան ԼԵՄ-ի կողմէ տրամադրուած նուէրներ եւ յուշանօթ մը:

Նշենք, որ «Գերազանց» արդիւնք ապահովող աշակերտներուն թիւը աճ արձանագրած է, ինչ որ

անգամ մը եւս կու գայ փաստելու հայկական վարժարաններու ուսման մակարդակը:

Իսկ «Շատ լաւ» յիշատակութիւն արձանագրող աշակերտները նոյնպէս արժանացան նիւթական պարգէւատրումներու: Անոնց անուններն են.

Յռիփսիմեանց վարժարանէն՝ Թաշճեան Անի, Յայ աւետարանական կեդրոնական բարձրագոյն վարժարանէն՝ Էքմէքճեան Սարին, Յայ կաթողիկէ Մեսրոպեան բարձրագոյն վարժարանէն՝ Չարըքեան Մեղրի, Թէքէեան վարժարանէն՝ Թորոսեան Մարալ, Ազգային Եղիշէ Մանուկեան քոլեճէն՝ Պալապանեան Բալիկ եւ Յայ աւետարանական քոլեճէն՝ Տեմիրճեան Արագ:

Նշենք նաեւ, որ ՅՅԴ ԼԵՄ-ը հայկական վարժարաններու 9-րդ կարգի բոլոր յաջողող աշակերտներուն անխտիր պիտի նուիրէ Արշալիր Շիրակեանի «Կտակն էր նահատակներուն» գիրքը:

### «ՄՈՆՐՕ» ՊԱՆԴՈՎԻՆ ՄԷՋ ԼԵՄ-ԱԿԱՆՆԵՐ ԵՒ ՉՈՍ-ԱԿԱՆՆԵՐ ԿԸ ԽԱՆԳԱՐԵՆ ԹՐՔԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԱՄԱՔ ՄԸ

23 փետրուարին լիբանանեան-թրքական ընկերակցութիւնը «Օվըրսիզ Էճիւքէյշըն Էյճընսի»-ի հետ կազմակերպած էր թրքական 16 համալսարաններու հաւաք՝ «Մոնրօ» պանդոկին մէջ: Խումբ մը ԼԵՄ-ականներ եւ ՉՈՍ-ականներ երեկոյեան մուտք գործեցին պանդոկի ցուցասրահ եւ կոչեր ցրուեցին՝ իրարանցում ստեղծելով:

Կոչերուն մէջ կ'ընդգծուէր լիբանանեան բարձրագոյն կրթական հաստատութիւններուն ունեցած բարձր մակարդակը կրթական մարզին մէջ: Կը նշուէր նաեւ, որ թրքական կրթական համակարգին պատճառով ներկայիս Թուրքիոյ մէջ ցեղապաշտ սերունդներ կը դաստիարակուին:

ԼԵՄ-ականները եւ ՉՈՍ-ականները իրենց կոչերուն մէջ նշեցին, որ Թուրքիա ներկայիս կը շահագործէ Լիբանանի դիմագրաւած ընկերային-տնտեսական ծանր տագնապը, որպէսզի լիբանանցի երիտասարդները ուսանելու համար Թուրքիա հրաւիրելով զանոնք թրքական քաղաքական եւ տնտեսական գործօնի վերածէ: Կոչ ուղղուեցաւ նաեւ լիբանանեան ազգային շահերը ամեն նկատառումէ վեր դասելու եւ զգուշանալու լիբանանցիներուն տնտեսական եւ քաղաքական կեանքին մէջ թրքական ներթափանցման հետեւանքներէն:

Հաւաքին ներկայ թուրքերը չկարենալով զսպել իրենց գայրոյթը յարձակեցան ԼԵՄ-ականներուն եւ ՉՈՍ-ականներուն վրայ, ինչ որ կարճատեւ միջադէպի պատճառ դարձաւ, սակայն շուտով հարցը իր լուծումը գտաւ:

### ՎԱՐԴԱՆԱՆՑ ՈԳԻՆ ԿՐԿԻՆ ԹԵՎԾԵՑ ԱՅՆՃԱՐԻ ԵՐԿՆԱԿԱՄԱՐԻՆ ՎՐԱՅ

ՅՅԴ «Կարմիր լեռ» կոմիտէի քարոզչական յանձնախումբին կազմակերպութեամբ եւ գործակցութեամբ ՅՅԴ ԼԵՄ-ի «Շաւարշ Միսաքեան» մասնաճիւղի վարչութեան 16 փետրուար 2012-ին, «Գ. Կիւլպենկեան» սրահին մէջ կատարուեցաւ Վարդանանց, Փետրուարեան ապստամբութեան եւ Արցախի գոյամարտի ոգեկոչումը՝ ներկաներու հոծ բազմութեան մը ներկայութեան:

Լիբանանի եւ Հայաստանի քայլերգներու ունկնդրութեան յաջորդեց Լալիկ Խօշեանի բացման խօսքը: Ան ի միջի այլոց անդրադարձաւ Վարդանանց ոգիին, որ անցած է սերունդէ սերունդ՝ հասնելու համար Սարդարապատ, ապա իր դրօշմը դրած է Փետրուարեան ապստամբութեան վրայ՝ հասնելու համար մինչեւ Արցախ:

Օրուան առաջին բանախօսն էր պատ. Տաթև Պասամճեան: Պատուելին իր խօսքը սկսաւ ցոյց տալով, թէ հազիւ քրիստոնէայ դարձած հայ ժողովուրդը արդէն պատրաստ էր վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց կռիւ մղելու:

Նկատելի է Վարդանանց պատերազմի պատմութեան մէջ, թէ Ղեւոնդ Երեցի պատգամէն եւ Վարդանի ճառէն ետք բոլորը մեղքերու խոստովանանք կատարեցին ու հաղորդութիւն ստացան եւ այդպէս զոհուելու գացին: Անոնք քաջ գիտէին, թէ զոհուելու համար կ'երթան: Զրիստոնէական կեանքը





նոր սահմանում կը ստանայ Վարդանանց պատերազմի եղելութեամբ: Անոնց համար քրիստոնեայ ըլլալ կը նշանակէ քրիստոնեութիւնը ապրիլ մինչեւ իսկ զոհուելու գնով: Այս գիտակցութեամբ անոնք ըսին Յազկերտին՝ «քու սուրդ՝ մեր պարանոցները», շեշտեց պատուելին:

Թէ Վարդանանց պատերազմը ի՞նչ հրամայականներ կը փոխանցէ մեզի այսօր՝ պատուելին ըսաւ, որ եթէ հարցնենք այսօրուան հայ երիտասարդներուն առջեւ դրուած դժուարութիւններուն մասին, անոնց մեծ մասը նիւթական դժուարութիւնները պիտի յիշէ, եւ թերեւս այլ տեսակի մարտահրաւերներ: Բայց դժբախտաբար շատ քիչեր պիտի անդրադառնան Յայ դատին կարելորութեան, հայ ազգին ձուլման պատճառներուն, կամ հայ եւ քրիստոնեայ ընտանիք մը կազմելու կարելորութեան:

«Իսկական հարցումը հետեւեալն է սիրելիներս. մենք ի՞նչ կ'ընենք մեր հայրենիքին, եկեղեցւոյ դպրոցներուն եւ ակումբներուն համար: Թող Վարդան եւ իր անթառամ յիշատակը մեզ զգաստ պահեն եւ շարունակեն ներշնչել մեր հայ ազգը, որպէսզի կարենանք այնպիսի սերունդ մը դաստիարակել, որ պիտի չբաւարարուի արտաքին երեւոյթներով, այլ պիտի ուզէ ունենալ իսկական առաքինի արժէքներ ապրելու հայ քրիստոնեայ անհատին կոչումը», ընդգծեց պատուելի Պասմաճեան:

Օրուան երկրորդ պատգամախօսն էր Պուրճ Յամուտի փոխքաղաքապետ Ճորճ Գրիգորեան, որ ընդհանուր ակնարկով մը ներկայացուց հայութեան մէջ գոյութիւն ունեցող զանազան խաւերը, որոնց շարքին կան օտարամուկներ, անտարբերներ, բայց կան նաեւ ազգային հարցերով մտահոգ անհատներ:

Ճ. Գրիգորեանի շօշափած յաջորդ միտքը հետեւեալն էր. ֆրանսացի ամենէն ազդեցիկ պատմաբաններէն մին կ'ըսէ, որ մեծ են այն ժողովուրդները, որոնք մեծ աղետներէ ետք կրցած են վերականգնիլ: Բայց եթէ գերմանացիները, ճափոնցիներն ու հրեաները վերականգնած են, ատիկա եղած է շնորհիւ միջազգային ճիգին եւ օգնութեան, իսկ հայերը իրենց բոլոր դժուարութիւններէն դուրս եկած են առանձին, սեփական ուժով, քրտինքով եւ արիւնով:

Այնուհետեւ պատգամախօսը շարունակեց իր միտքը՝ բաղդատական մը կատարելով Երոպայի մէջ տեղի ունեցած կարգ մը յեղաշրջումներու եւ Վարդանանց սիրագործութեան միջեւ. ան վկայակոչեց Քոլոմպիա համալսարանի համաշխարհային բաղդատական պատմութեան դասախօս Ճէյմս Ռասըլը, որ ըսած է, թէ Աւարայրի ճակատամարտը մարդկութեան պատմութեան առաջին ժողովրդային պատերազմն է, որ մղուած է խղճի ազատութեան եւ անհատական ու հաւաքական իւրայատկութիւնը եւ ժառանգութիւնը պահպանելու իրաւունքին համար, անհամեմատ մեծ ուժի մը դէմ առանց օտար նեցուկի՝ զինուած միայն արդարութեան եւ իրաւունքի գէնքով:

Ֆրանսական յեղափոխութեամբ կը հպարտանան ֆրանսացիք, թէ իրենք մարդկային իրաւունքներուն համար յեղաշրջում ըրած են, բայց ատիկա միայն 1789-ին էր, իսկ հայերը համամարդկային իրաւունքներու համար շատ անելի առաջ իրենց ձայնը բարձրացուցած են:

Դարձեալ ամբողջ աշխարհէն լքուած եւ ցեղասպանութենէն հազիւ դուրս ելած, սովէն ու համաճարակէն հիւժուած եւ խորհրդային նենգամտութեան դիմած այդ ժողովուրդը եկաւ ըսելու իր «ոչ»-ը եւ Փետրուարեան ապստամբութեան դրօշը պարզուեցաւ անարդարութեան դէմ:

Իր խօսքին վերջին բաժինով Ճ. Գրիգորեան անդրադարձաւ արցախեան հերոսամարտին, ուր դարձեալ հայը առանձին էր, եւ իր առանձնութեան մէջ հզօր: Յայերը որսորդական հրացաններով դէմ դրին հրասայլերու եւ յաղթեցին, ինչպէս յաղթած էր 4500 տարի առաջ Յայկ նահապետը, իսկ 1600 տարի առաջ՝ Վարդանը: Յաղթական այս երթը պիտի շարունակուի, այնքան ատեն, որ ազգային այս ոգին տակաւին ուժեղ է:

Գեղարուեստական բաժինով ելոյթ ուեցան ԼԵՄ-ի «Շ. Միսաքեան» մասնաճիւղի անդամները նախ ասմունքով, ապա խմբերգով մը, իսկ Ազգային «Յառաջ-Գ. Կիւլպենկեան վարժարանի աշակերտները, դպրոցի արուեստի ուսուցչուհի Նարինէ Գրիգորեանի ջանքերով բեմականացուցին Արա Գեորգեանի «Արցախ» ստեղծագործութիւնը, ինչ որ ներկաներուն կողմէ մեծապէս գնահատուեցաւ՝ նկատի ունենալով պարին նոր շունչն ու ոգին:

### **ՅՅԴ ԼԵՄ-Ի «ՅՐԱՅՐ ԴԺՈՒՔ» ՄԱՍՆԱՃԻՂ. ՍԱՍՆՈՅ Բ. ԱՊՍԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՅՐԱՅՐ ԴԺՈՒՔԻ ՆԱՅԱՏԱԿՈՒԹԵԱՆ 108-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԶԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ**

Կազմակերպութեամբ ՅՅԴ ԼԵՄ-ի «Յրայր Դժոխք» մասնաճիւղին, 10 փետրուար 2012-ին, երեկոյեան ժամը 8:00-ին, «Ազատամարտ» ակումբի «Զուխատարեան» սրահին մէջ տեղի ունեցաւ Սասնոյ Բ. ապստամբութեան եւ Յրայր Դժոխքի նահատակութեան 108-ամեակին նուիրուած հանդիսութիւն՝

ներկայութեամբ պատկան մարմիններու ներկայացուցիչներու եւ մեծաթիւ երիտասարդներու:

Հանդիսութեան բացման խօսքը ՀՀԼԵՄ-ի «Հրայր Դժոխք» մասնաճիւղին անուով արտասանեց Մեղրի Պապիկեան, որ նշեց, որ Հրայր Դժոխք եղած էր սասունցիներուն պահապանը, Սասնոյ Բ. ապստամբութեան սիրտն ու խիղճը:

Պապիկեան ըսաւ, որ Հրայր Դժոխք ստեղծած է յեղափոխաշունչ մթնոլորտ եւ նահատակուած է հերոսական մահով՝ կերտելով իսկական դաշնակցականի տիպարը: Ան հաստատեց, որ ՀՀԼԵՄ-ի «Հրայր Դժոխք» մասնաճիւղը հետեւելով Հրայր Դժոխքի սրբազան ուղիին վառ պիտի պահէ հերոսին յիշատակը:



Ապա ներկաները դիտեցին Հրայր Դժոխքի եւ Սասնոյ Բ. ապստամբութեան նուիրուած տեսերիզ մը, որմէ ետք ելոյթ ունեցաւ օրուան բանախօսը՝ ՀՀԼԵՄ-ի Լիբանանի Կեդրոնական կոմիտէի անդամ Յովիկ Պերթիզլեան: Ան հաստատեց, որ Հրայր Դժոխք յեղափոխական գործունեութեան ամբողջ դարոց մըն է եւ կացութիւնները փրկող ճկուն, խիստ ու յամառ գործիչ մը եղած է:

Պերթիզլեան շեշտեց, որ Հրայր Դժոխք կը հաւատար, որ ժողովուրդը պետք է հաւաքաբար մղէ յեղափոխութիւնը, որովհետեւ ազատագրական պայքարին պետք է մասնակցին բոլորը, այլապէս յեղափոխական գործը դատապարտուած է ձախողութեան:

Յովիկ Պերթիզլեան նաեւ խօսեցաւ յեղափոխական գործ տանելու ֆետայական-զինուորական ոճին մասին՝ յայտնելով, որ Հրայր Դժոխք այս ոճին դէմ էր, քանի որ յեղափոխական գործը ժողովրդային պետք էր ըլլար: Բանախօսը շեշտեց, որ այս երկու ոճերուն մէջ գիծ մը կար, որ ստեղծած էր Դաշնակցութիւնը, եւ կուսակցութեան ազատագրական պայքարի դարոցը ամբողջական է, որ կը հասցնէ արդիւնքի:

Հրայր Դժոխքի կեանքն ու Սասնոյ Բ. ապստամբութեան հոլովոյթը ներկայացնելէ ետք՝ Յ. Պերթիզլեան անելցուց, որ Գեորգ Չաւուշներու, Անդրանիկներու եւ Հրայր Դժոխքներու ուղին շարունակուեցաւ Արցախի մէջ, երբ ազատամարտիկները միեւնոյն ուժգնութեամբ եւ համաժողովրդային մակարդակով պայքարեցան ու յաղթեցին: Եզրակացնելով Յովիկ Պերթիզլեան ըսաւ, որ տակաւին գործը չէ անարտած՝ վստահեցնելով, որ նոր սերունդին մէջ ալ կան չաւուշներ եւ հրայրներ, որոնք պիտի գան շարունակելու գործը:

Բանախօսութենէն ետք Հրակ Փափագեան նուազեց յեղափոխական երգեր, մինչ Շաղիկ Յովսէփեան ասմունքեց Սիամանթոյի «Գաղափարին» ստեղծագործութիւնը: Գեղարուեստական յայտագիրի անարտին Յարութ Լափաճեան երգեց երեք յեղափոխական երգ: Հանդիսութիւնը փակուեցաւ «Մշակ բանուոր»-ով:

### ԼԵՄ-Ի «ՀՐԱՅՐ ԴՃՈՒՔ» ՄԱՍՆԱՃԻՂԻ ԱՃԻԱՏԱՆՔՆԵՐԸ

22 յունուարին ՀՀԼԵՄ-ի «Հրայր Դժոխք» մասնաճիւղի վարչութիւնը եւ խումբ մը ընկերներ այցելեցին ԶԱՅԼ-ի ծերանոց Նոր տարուան առիթով: Անոնք փոքր նիւթական օժանդակութիւն տրամադրեցին եւ կարկանդակ ու օշարակ հրամցուցին: Մօտ երկու ժամուան ընթացքին անոնք զրուցեցին ծերերուն հետ եւ մթնոլորտը ճոխացուցին:

Կիրակի, 29 յունուարին՝ ժամը 10:00-ին ՀՀԼԵՄ-ի «Հրայր





Դժոխք» մասնաճիւղի անդամները իրենց դաշնակցական պարտքը կատարեցին եւ այցելեցին Պուրճ Զամուտի Ազգային գերեզմանատուն: Անոնք մոմ վառեցին Լիզայոնի Նահատակ ընկերներու դամբարանին առջեւ, ծաղկեպսակ մը տեղադրեցին եւ «Վերջելով լի» երգեցին: Ապա անոնք անցան ԶՅԴ Նահատակաց պանթեոնին առջեւ եւ «Յառաջ Նահատակ»-ով փակեցին իրենց ձեռնարկը:

### ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ ԶՅԴ ԼԵՄ-Ի ՄԻՋԴԴՐՈՑԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄՐՑՈՒՄ

Շաբաթ, 17 դեկտեմբեր 2011-ին, կեսօրէ ետք ժամը 3:00-ին, «Ազդակ»-ի «Փիւնիկ» սրահին մէջ տեղի ունեցաւ ԶՅԴ Լիբանանի երիտասարդական միութեան Կեդրոնական վարչութեան կազմակերպած միջոցառոցական զարգացման մրցումը, որուն իրենց մասնակցութիւնը բերին 7 հայկական երկրորդական վարժարաններ:



Մասնակցող վարժարաններն էին՝ Զամազգայիի Մ. եւ Զ. Արսլանեան ճեմարանը, Ազգային Եղիշէ Մանուկեան քուլտը, Ազգային Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան քուլտը, Զայ աւետարանական կեդրոնական բարձրագոյն վարժարանը, Զայ աւետարանական քուլտը, Զայ կաթողիկէ Մետրոպէան բարձրագոյն վարժարանը եւ ԶԲԸՄ Դարուի-Յովակիմեան երկրորդական վարժարանը, իւրաքանչիւր դպրոցէ 6 աշակերտներ՝ երկրորդական բաժանմունքէն: Ներկայ էին նաեւ դպրոցներու տնօրէններ, ուսուցիչներ, աշակերտներ ու քաջալերողներ:

ԼԵՄ-ի անունով բացման խօսքը արտասանեց Աշոտ Բագրատունի, որ անդրադարձաւ հայ վարժարաններու առաքելութեան եւ անոնց կարեւորութեան՝ հաստատելով, որ ԼԵՄ-ը միշտ պատրաստ է ձեռք երկարելու հայ վարժարաններուն՝ նեցուկ կանգնելով անոնց մարդակերտումի ու հայակերտումի ծրագիրներուն: Բագրատունի աւելցուց, որ զարգացման մրցումը պիտի նպաստէ մեր ազգային, յեղափոխական եւ ընդհանուր գիտելիքներու պաշարին: Նախքան մրցումին սկսիլը, Բագրատունի յիշեցուց Գարեգին Նժդէի պատգամը, որ մեր ազգի ապագան, մեր երիտասարդութիւնն է:

Զարգացման մրցումի հարցումները բաժնուած էին հիմնական 6 ենթաբաժանումներու՝ Զայաստան, Արցախ, մշակութային, դէմքեր, մարզական եւ այլազան: Զարցումները կ'ընդգրկէին զանազան նոր տեղեկութիւններ եւ գիտելիքներ: Մասնակից աշակերտները խանդավառ մթնոլորտի մէջ պատասխանեցին հարցումներուն: Զակառակ անոր որ արդիւնքները շատ մօտ էին, բայց եւ այնպէս բարձրագոյն արդիւնքը ապահովող դպրոցը՝ Ազգային Եղիշէ Մանուկեան քուլտը հանդիսացաւ առաջին, Զամազգայիի Մ. եւ Զ. Արսլանեան ճեմարանը՝ երկրորդ, իսկ Ազգային Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան քուլտը՝ երրորդ:

Յատկանշական էր այն, որ երկրորդ տարին ըլլալով առաջին հանդիսացող խումբի բոլոր անդամներուն ԶՅԴ ԼԵՄ-ը տրամադրեց Զայաստան երթուղարձի տոմսեր:

Մրցումի աւարտին ԼԵՄ-ի անունով Աշոտ Բագրատունի շնորհաւորեց յաղթական խումբը եւ շնորհակալութիւն յայտնեց բոլոր մասնակից վարժարաններուն՝ մաղթելով, որ ԼԵՄ-ի միջոցառոցական զարգացման մրցումը տարեկան աւանդութիւն դառնայ: Ապա բոլոր մասնակիցները հրաւիրուեցան խմբային նկարի ու հիւրասիրութեան, իսկ առաջին հանդիսացող աշակերտները սրահէն հեռացան երգելով «Երազ իմ երկիր հայրենի...»-ն:

Նշենք նաեւ որ Անցեալ տարուան առաջին յանդիսացող վարժարանի՝ Զայ աւտարանական Կեդրոնական բարձրագոյն վարժարանի աշակերտները ԼԵՄի տրամադրած տոմսերով Օգոստոսին այցելեցին Զայրենիք ու վայելեցին անոր անդառամ գեղեցկութիւնը:

### 87 ՆՈՐԱԳԻՐՆԵՐ ՄԻԱՑԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՇԱՐՔԵՐՈՒՆ

Երկուշաբթի, 5 դեկտեմբերի երեկոյեան տեղի ունեցաւ ԶՅԴաշնակցութեան շարքերու մուտքի երդման արարողութիւն, որուն ճամբով 87 նորագիրներ միացան ԶՅԴ-ի շարքերուն՝ ՉՈՍ-Էն, ԼԵՄ-Էն եւ շրջաններէն:

Օրուան կնքահայրն էր ԶՅԴ Բիւրոյի անդամ Մարիօ Նալպաստեան, որ երդման արարողութիւնը

Նկատեց բացառիկ առիթ մը՝ որոշելու անձնագոհութեամբ եւ ամենայն գիտակցութեամբ միանալ կուսակցութեան շարքերուն: Անոր համաձայն, այս դարու մարտահրաւերները բազում են, սակայն դաշնակցական երիտասարդը կորովն ու կարողութիւնը պիտի ունենայ պայքարելու անոնց դէմ, այսպիսով զանազանուելով այլ երիտասարդներէն:

Մ. Նալպանտեանի համաձայն, թէեւ ՀՀԴ-ի Ծրագրի ու Կանոնագրի մշակուած թուականէն բաւական երկար ժամանակ անցած է, դարու բերած վտանգները փոխուած են, սակայն կուսակցութեան գաղափարախօսութիւնն ու ուղեգիծը կը մնան նոյնը՝ այսպիսով դաշնակցականը դնելով Նիւթաբարոյական պարտաւորութիւններու, մահուան գնով ազգին նուիրուելու պատրաստակամ ըլլալու դէմ յանդիման:

Ան նշեց, որ Դաշնակցութեան շարքերը մուտք գործելու թեկնածու երիտասարդը պէտք է գիտնայ, որ հայրենիքը կը մնայ բացարձակ հասկացողութիւն, իսկ համայն սփիւռքին եւ լիբանանահայ գաղութին ծառայելու պարտաւորութիւնը՝ առաջնահերթութիւններու կարգին: Իւրաքանչիւր դաշնակցական երիտասարդ պէտք է գործէ իր համայնքի ուժեղացման, հզօրացման ու ամրապնդման համար:

Մ. Նալպանտեան պահը նկատեց լրջութեան եւ ինքնագիտակցութեան պահ, որպէսզի կարելի ըլլայ նուիրական ըլլալու ճիշդ որոշումը տալ եւ ըստ այնմ մուտք գործել ՀՀԴ-ի շարքերը:

Ան սերունդը կոչեց «Հայաստանի Հանրապետութեան եւ Արցախի Հանրապետութեան 20-ամեակի սերունդ»:

### ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՆԱՅԱՏԱԿՈՒԾ ԵՒ ՄԱՅԱՑԱԾ ՆՈՒԻՐԵԱԼՆԵՐՈՒՆ ՅԻՇԱՏԱԿԻՆ ՀՈԳԵՅԱԼԳՍՏԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ



Հայ յեղափոխական դաշնակցութեան 121-ամեակին առիթով, նահատակուած եւ մահացած դաշնակցական նուիրեալներու յիշատակին կիրակի, 4 դեկտեմբեր 2011-ին կէսօրէ առաջ ժամը 11:30-ին, Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատան ՀՀԴ պանթէոնին առջեւ տեղի ունեցաւ հոգեհանգստեան պաշտօն:

Հոգեհանգիստէն ետք, ՀՍԸՄ-ի շեփորախումբին ընկերակցութեամբ, ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի, Համազգայինի Լիբանանի Շրջանային վարչութեան, ԼՕԽ-ի Շրջանային վարչութեան, ՀՍԸՄ-ի Լիբանանի Շրջանային վարչութեան, Չաւարեան ուսանողական միութեան, Լիբանանի երիտասարդական միութեան եւ Լիբանանի պատանեկան միութիւններուն կողմէ պանթէոնին առջեւ գետեղուեցան ծաղկեպսակներ:

ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէին խօսքը արտասանեց Յակոբ Հաւաթեան, որ նշեց, թէ այսօր 121-ամեակն է Հայ յեղափոխական դաշնակցութեան, եւ կուսակցութեան Լիբանանի ընտանիքը իր ուղեկից միութիւններով, պատանիներով, երիտասարդներով, ուսանողներով ու համակիրներով հաւաքուած է ՀՀԴ պանթէոնին դիմաց ոչ թէ յաւուր պատշաճի իր յարգանքի տուրքը մատուցելու, այլ՝ նահատակներուն հետ միասին պատմութեան այս կարեւոր թուականը նշելու:

Հաւաթեան ըսաւ. «Եկած ենք այսօր ձեր դիմաց դաշնակցական անկեղծ զինուորի հաւատքով ու վճռակամութեամբ հաշուետուութիւն կատարելու, անգամ մը եւս հաստատելու՝ կեանքի գնով ծառայելու հայ ժողովուրդին ու անոր ազգային հաւաքական տեսլականներուն եւ վերանորոգելու մեր ուխտն ու շարունակելու երթը»:

Ան անելցուց, որ Միջին Արեւելքի գաղութները այսօր կը դիմագրաւեն մեծ դժուարութիւններ, եւ Դաշնակցութիւնը ամբողջական յանձնառութեամբ կը փորձէ ժողովուրդը հեռու պահել ցնցումներէ՝



ցուցաբերելով գերզգոն քաղաքական մօտեցում, զոր ժառանգած ենք նահատակներեն:

Հաւաթեան հաստատեց, որ լիբանանահայ կառոյցները ունին իրենց մեծ դերակատարութիւնը՝ հասնելով հանրութեան ընկերային կարիքներուն, ստեղծելով երիտասարդական մթնոլորտ եւ շարունակելով Հայ դատի պահանջատիրութիւնը:

Յակոբ Հաւաթեան շեշտեց, որ դաշնակցական գործը բոլորին ներդրումը կը պահանջէ, եւ այդ գործը միաւորող է, միասնակամ: Իր խօսքը եզրափակելով՝ Հաւաթեան անգամ մը եւս պատգամը ուղղելով նահատակներուն ըսաւ. «Սիրելի՛ ու անմոռաց ընկերներ, կը հաւատանք, որ Դաշնակցութիւնը ապագայի կուսակցութիւն է, Հայաստանը ամէն բանէ վեր դաւանող կուսակցութիւն է՝ ի խնդիր ազատութեան ու անկախութեան մէջ լիարժէք կերպով իր կեանքը կերտելու եւ ամբողջական Հայաստանի բոլոր բարիքները վայելելու արդար ու անկորնչելի իրաւունքը իրեն վերադարձուցած հայ անհատին՝ բովանդակ ու միասնակամ հայութեան»:

### **ՀՅԴ ԼԵՄ ԶԱՐՈՉՉԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ. ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ ԵՐԳԱՅԱՆԴԵՍ**

Կազմակերպութեամբ ՀՅԴ ԼԵՄ-ի քարոզչական յանձնախումբին, երեկ՝ ուրբաթ, 11 նոյեմբեր 2011-ին, երեկոյեան ժամը 8:30-ին, «Յակոբ Տէր Մելքոնեան» թատերասրահին մէջ տեղի ունեցաւ յեղափոխական երգերու երգահանդէս:

ՀՅԴ ԼԵՄ-ի անունով երգահանդէսի բացման խօսքը արտասանեց Հրակ Աւետանեան, որ անդրադարձաւ ազգային, հայրենասիրական եւ յեղափոխական երգերու արժէքին ու պատգամին:

«Այս երգերը մեզի հասած են Տէր Չօրի անապատէն մինչեւ սփիւռքի բաբախող սիրտը՝ Լիբանան: Մեր ժողովուրդը այս երգերը երգած է Արարատեան դաշտէն մինչեւ Արագածի լանջերը, Պանք Օթոմանէն մինչեւ Խանասոր, Պերլինէն մինչեւ Լիզպոն, Ապրիլ 24-էն մինչեւ Մայիս 28», նշեց ան:

Աւետանեան աւելցուց նաեւ, որ հայ ժողովուրդը այս երգերը երգեց իր անմահ հերոսներուն եւ նահատակներուն յիշատակին:

Ան ԼԵՄ-ի անունով կոչ ուղղեց ներկաներուն՝ ըսելով. «Երգեցէ՛ք մեր յեղափոխական երգերը, քաղեցէ՛ք անոնց պատգամները, փոխանցեցէ՛ք զանոնք սերունդէ սերունդ, որպէսզի կարելի ըլլայ զանոնք վերստին երգել Արարատի լանջերէն մինչեւ Շահումեան, Ջաւախքէն մինչեւ Նախիջեւան, Տիգրանակերտէն մինչեւ Սուսա լեռ, Ուրֆա, Մարաշ, Սասուն ու Չէթուն...»:

Ապա բեմ բարձրացաւ գաղութի նորահաս երգիչներէն եւ ԼԵՄ-ական Յարութ Լափաճեան, որ ժողովուրդը հրապուրեց իր երիտասարդ, բայց հեղինակաւոր ձայնով: Լափաճեան նաեւ մեկնաբանեց իր անձնական երգը:

Երիտասարդ երգիչին յաջորդեց Լուս Անճելըսէն ժամանած, լիբանանահայ գաղութի զաւակ, յեղափոխական երգերու մեկնաբան Շահէ Սգայեան, որ ներկաները հրապուրեց իր խանդավառութեամբ եւ ձայնի հնչեղութեամբ: Շահէ Սգայեան իր բամբ ու զուլալ ձայնով բեմէն կախարդեց ներկաները՝ զանոնք տանելով դէպի հայոց պատմութեան տարբեր շրջաններն ու հայ ազգի ապրած զանազան հանգրուանները անոնց մէջ սերմանելով յեղափոխաշունչ հոգի եւ զանոնք վերածելով կամաւոր բանակի:

Յայտագիրին նաեւ մասնակցեցաւ լիբանանահայ նորահաս երգչուհի, «Երկու աստղ» մրցումի աստղերէն Լուսին Տեմիրճեան, որ ինչպէս միշտ տիրական կեցուածքով ու հեղինակութեամբ ինքնավստահօրէն տերը դարձաւ բեմին ու երգերը հրամցուց իրենց արժանի որակով:

Երգիչներուն միացան Սեդօ Պաղտասարեան եւ իր նուագախումբը, յաւելեալ փայլք մը տալով երգահանդէսին:

Սրահը լեցուն էր հոծ բազմութեամբ եւ յատկապէս երիտասարդներով, որոնք մեծապէս գնահատեցին ձեռնարկը իրենց ծափահարութիւններով, ողջոյններով ու երգերուն մասնակից դառնալով:

Երգահանդէսը իր աւարտին հասաւ «Արիւնտ դրօշ» երգով, որուն ճամբով երիտասարդութիւնը անգամ մը եւս նորոգեց իր ուխտը՝ հաւատարիմ մնալու հայ ազգի արդար դատին ու պայքարին:

### ՄԵՆՔ ԵՆՔ ՄԵՐ ՄՇԱԿՈՅԹԸ» ԿԱՐԳԱԽՕՍՈՎ ԻՐԱՅԱՏՈՒԿ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ. «ԱՌԱՆՑ ՄՇԱԿՈՅԹԻ ԱԶԳ ՉԻ ԳՈՅԱՆԱՐ» Կ'ԸՍԵ ՏԻԳՐԱՆ ՃԻՆՊԱՇԵԱՆ



Կազմակերպութեամբ ՀՀԴ ԼԵՄ-ի «Հայաստան» մասնաճիւղին եւ մասնակցութեամբ Լիբանանի մէջ գործող հայրենակցական միութիւններուն, շաբաթ, 29 հոկտեմբեր 2011-ին, երեկոյեան ժամը 7:00-ին, Ազգային Եղիշէ Մանուկեան քոլեճի «Սիրան Մանուկեան» սրահին մէջ տեղի ունեցաւ «Մենք ենք մեր մշակոյթը» կարգախօսով հանդիսութիւն՝ ներկայութեամբ ԼԵՄ-ականներու, պատանիներու եւ ժողովրդային բազմութեան:

Հանդիսութեան բացման խօսքը արտասանեց Արամ Սոմունճեան, որ նշեց, թէ երիտասարդութեան մեծ մասը ծանօթ չէ իր արմատներուն, ինչ որ առողջ երեւոյթ չէ:

Սոմունճեան ըսաւ, որ ազգային ընդհանուր քաղաքականութիւն պէտք է որդեգրուի եւ կիրարկուի, որպէսզի երիտասարդները վերադառնան իրենց հիւրերէն եւ հոգեկան արմատներուն: Արամ Սոմունճեան շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց, որոնք մասնակից դարձան այս ձեռնարկին յաջողութեան:



Ապա գեղարուեստական յայտագիրի առաջին բաժինով պարերով ելոյթ ունեցաւ «Ֆրիտըմ տես կրուփ»ը, իսկ երգերով՝ Գարմէն Աճեմեան: Օրուան բանախօսն էր Տիգրան Ճինպաշեան: Ան ըսաւ, որ սփիւռքի կազմաւորման շրջանին հայրենակցական միութիւնները մի-

ջոց կը հանդիսանային պահպանելու ազգականական եւ դրացիական կապերը:

Ճինպաշեան աւելցուց, որ սովորութիւնները կը պահպանեն ազգին էութիւնը եւ օտարութեան մէջ կ'ապահովեն հայութեան երթին շարունակութիւնը: Ան նշեց, որ սփիւռքի մէջ արժեքներն ու հողը կը փոխարինուէին գաղափարով, իսկ հայրենիքը վերացականօրէն կը շարունակուէր գոյութիւն ունենալ:

Տիգրան Ճինպաշեան հաստատեց, որ վերջին տարիներուն հայրենակցական միութիւնները կենդանութեան նոր նշաններ ցոյց կու տան եւ այսօր չունին նախկին հարցերը, այլ՝ ունին ընդհանրական գործունէութիւն եւ դէպի ամբողջական Հայաստան առաջնորդող ընդհանրական հայեացք:

Ան յայտնեց, որ առանց մշակոյթի ազգ չի գոյանար՝ աւելցնելով, որ անհրաժեշտ է պահպանումը հայրենական սովորութիւններուն, ֆոլքլորին, խօսք ու բանին, երգ ու պարին, ճաշերուն, կենցաղին, պապենական ավանդութիւններուն, նիստ ու կացին եւ ընտանեկան սրբութիւններուն, որոնք հիմք կը կազմեն մեր քաղաքակրթական առանձնայատկութեան եւ մեր ուրոյն մշակոյթին ու ազգային նկարագիրին:

Բանախօսութենէն ետք Ալագեազ Թորոսեան դաշնակով նուագեց, ապա Կարօ Ակոբեանի կատարողութեամբ տեղի ունեցաւ ժողովրդական եւ հայրենասիրական երգերու ներկայացում: Ակոբեանին կ'ընկերակցէր Սեդօ Պաղտասարեան:

Յայտնենք, որ ձեռնարկին ընթացքին սրահին մէջ հայրենակցական միութիւնները ցուցադրած էին լուսանկարներ, ավանդական իրեր, ինչպէս նաեւ շրջանները ծանօթացնող գրքոյկներ:

# ԲՈՎԱՆՊԱԿՈՒԹԻՒՆ

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԿԱՌՉԻԼ ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԻՆ

1

## ԱՐՏԱԳԱՂԹ / ԴԵՊԻ ԵՐԿԻՐ

• «ԱՐՏԱԳԱՂԹԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԲԱԶՄԱԶԱՆ ԵՆ՝ ԲԱՂԱԲԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ, ԸՆԿԵՐԱՅԻՆ, ԻՐԱԲԱԿԱՆ ՀԻՍԵՐՈՎ» «ՈԱԶՄԻԿ»-ԻՆ Կ'ԸՍԷ Լ. ԳԱԼՍՏԵԱՆ

3

• ԱՐՏԱԳԱՂԹԻ ԵՐԵՒՅԹԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Ս. Թ.

6

• ԱՐՏԱԳԱՂԹԻ ՀՆՉԱԾ Է, ԿԸ ՄՆԱՅ ԱԿԱՆՋ ՏԱԼ

Հ. Ա.

8

• «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ԿԱՄԱԽՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆ Է, ԵՒ ԻՐԱԲԱԿԱՆՉԻՐ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՊԵՏՔ Է ԱՆՑՆԻ ԱՅԴ ՀԱՆԳՐՈՒՄՆԵՆ», «ՈԱԶՄԻԿ»-ԻՆ Կ'ԸՍԷ ՍԵԻՄԱՆ ԳԱՊԱԳԵԱՆ

10

• ԱՅԼԵԻՍ ՊԱՆՂՈՒԽՏ ԵՆՔ

ՍԵԻՄԱԿ ՏԵՄԻՐՃԵԱՆ

13

• ՀՈՒՐԸ ՍԵՐ

Բ. Ա.

15

## ՀԱՅԱՊԱՅՊԱՆՈՒՄ

• Ա՛Լ ԲԱՅԵՐԸ ՆԵՏԵՑԵ՛Ք

17

• ՕՏԱՐԵՆ ԵՐԲԵՔ ՄԵԶ ՖԱՅՏԱ ԶԿԱՅ

ԱՅԲ

18

• ԱՐԱՐԱՏԻՆ ԴԻՄԱՑ

ԲՐԻՍԹԻՆԱ ՍՐԱՊՈՆԵԱՆ

20

• ՄԵՆՔ ՆՈՅՆՆ ԵՆՔ, ԲԱՅՑ ՈՒՐԻՇ ԵՆՔ...

ՆԱՆՈՐ ՊԱԼԱՊԱՆԵԱՆ

22

• ՀԱՅ ԵՂԻՐ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒՈՎ

ՀՐԱԿ ԱԻՏԱՆԵԱՆ

23

ՍԱՐԻՆ ԴԱԶԱՐԵԱՆ

## ԱԶԱՏ ԲԵՄ

• ՈՒԺԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՀԵՐՈՍՈՒԹԵԱՆՑ

25

• ԱՆՉՈՒԳԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԸ

ԳՐԻՉ

27

• ՊԻՏԻ ՀԵՏԵԻՆՔ ՆՈՒԻՐԵԱԼՆԵՐՈՒ ՈՒՂԻՆ

ԱԲԻԿ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

28

• «ԿԵՑՑԵ՛ ՀՆԴԿԱՀԱՒԸ»

ՑՈԼԵՐ ԳԱԼԱՅՃԵԱՆ

29

• ԱԶԳԵՐԸ ԶԵՆ ՄԵՌՆԻՐ, ԱՆՁՆԱՍՊԱՆ Կ'ԸԼԼԱՆ...

ԵՂԻԿ ԹԱՇՃԵԱՆ

31

• ՀԱՅ ԳԻՐՔԸ

Ա. Յ. Բ.

32

ԳԱՅԼ ԿԱՀԱՆ

## ԱՆՄԱՀՆԵՐ

ՌՈՒԲԵՆ ՏԵՐ ՄԻՆԱՍԵԱՆ

34

## ՌԱԶՄԱԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

36

ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹ

ՄԵՐ ԵՐԱԺԵՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ

ԿԱՐԱՆԴԱ ԵԱԳՈՒՊԵԱՆ

38

ՏԵՂԵԿԱՏՈՒ

40

# ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 4

1															
2					■		■							■	
3								■		■				■	
4			■					■		■					
5		■					■			■				■	
6	■				■								■		
7				■		■									
8			■							■					
9									■						■
10						■							■		
11	■				■				■				■		
12			■					■							
13										■					■
14		■						■							
15										■					

**Թիւ 3 Խաչբառիւն Լուծումը**

1	Կ	Ա	Ր	Ա	Պ	Ե	Տ	Ղ	Ա	Ի	Թ	Ե	Ա	Ն	■
2	Ս	Կ	Ո	Ի	Տ	Ե	Ղ	Ի	Ն	■	Ա	Ր	Ս	Է	Ն
3	Մ	■	Ք	Ա	Ղ	■	Մ	■	Կ	Տ	Ղ	Ի	Լ	■	Ա
4	Ի	Լ	■	Ր	Ո	Կ	Ո	Մ	■	Ի	Ա	Թ	Ա	■	Ն
5	Թ	Ե	Թ	Ե	Ի	Ո	Ի	Թ	Ի	Ի	Ն	■	Ն	Շ	Է
6	■	Ի	■	Կ	Ն	Ա	Տ	Ի	Լ	■	Թ	Ի	■	Ի	■
7	Խ	Ո	Ո	■	Ց	■	■	Ն	Ի	Յ	■	Մ	Ա	Ր	Ա
8	Ա	Ն	Ի	Ն	■	Ա	Ճ	■	Կ	Ա	Խ	Ա	Ղ	Ա	Ն
9	Ն	Շ	Ա	Ն	Ա	Բ	Ա	Ն	■	Մ	Ե	Ն	■	Կ	Կ
10	Ղ	Ա	Տ	■	Թ	Ե	Մ	Ա	Կ	Ա	Լ	■	Յ	■	Ա
11	Ա	Ն	■	Կ	Ա	Ղ	Ա	Ղ	■	Ց	Ա	Մ	Ա	Ց	Ր
12	Կ	Թ	Ա	Ն	■	Ա	Ր	Մ	Է	Ն	Գ	Ա	Ր	Օ	■
13	Ա	■	Պ	Տ	Ո	Յ	Տ	■	Լ	■	Ա	Ր	Ի	Տ	Ա
14	Թ	Ա	Ր	Ա	Խ	■	Ա	Ս	Պ	Ա	Ր	■	Ս	Ո	Ր
15	■	Ս	Ի	Կ	■	Ա	Կ	Ո	Ա	Յ	■	Բ	Ա	Ց	Ի

**Պատրաստեց՝ Տ. Մ. ԱՂԱԶԱՐԵԱՆ**

**ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ**

1. Դաշնակցութեան կազմակերպչական՝ յատկապէս իգական խումբերու կազմութեան մէջ գործօն դեր ունեցած անձը:
2. Յիշատակելի - Կերպասի կտոր:
3. «Թայթանիք» նաւը այդ ովկիանոսին մէջ ընկողմեցաւ - Ածականակերտ մասնիկ - Անձնական դերանուն:
4. Հին ձեռով իգական «նա» - Թռչուն որսալու՝ մածուցիկ նիւթով ծածկուած ճիւղ- Երկվայրկեան:
5. Երոպական երկիր (հակ.) - Համբոյր - Այբուբենէն:
6. Արհամարհէ՛ - Ըմպելիք - Իրերայաջորդ տառեր:
7. Եղեգնեայ փոքր սրինգ - Ջրային փոխադրամիջոցներու սեփականատեր:
8. Փտութիւն - Երգահան - Պատշաճ:
9. Եօթնօրեայ պահք - Խիպ, ամօթ:
10. Տանտիկին - Դաշնակցական գործիչ՝ Յարութիւն Շահրիկեանի ծածկանուններէն - Անձայն՝ հրաւեր:
11. Հիւանդութիւն - Պոկել - Հայաստանի գետերէն:
12. Կրկնուած բաղաձայններ -Արեւելեան տիտղոս - Մայրենի փոր:
13. Մարտանաւի տեսակ - «Գեղեցիկ» նահապետը:
14. Տիար - Սուտանի լիճերէն - Գրաբար՝ անոնց:
15. Ժողովի դրուելիք նիւթերու ցանկ - Սրբուհի Տիւսաբի վեպերէն՝ «... կամ վարժուիին»:

**ՈՐՂԱՅԱՅԵԱՑ**

1. Պարտքերը վճարելու անկարող վաճառական - Սաստ - Զներգ (հակ.):
2. Մկունդ - Թիւի մը ինքնիրմով երկու անգամ բազմապատկութեան արդիւնքը:
3. Առասան - Յարութիւն Կիրակոսեանի յեղափոխական ծածկանունը - Յետոյ:
4. Մեկնակետի - Մոմակալ, ճրագակալ:
5. Ատրեստանի մայրաքաղաքը - Թէ որ - Լիզպոնի նահատակներէն:
6. Շրջուած՝ բարունակ - Գունաւոր:
7. Շրջուած յարդանկողին - Ժխտական մասնիկ - Չրեանդ, բուժական բոյս:
8. Հանքային համեմ -Նուրբ ասեղնագործութիւն:
9. Սիամանթոյի ծննդավայրը - Անգլիացի կատակերգակ դերասան - Իրաքեան լրատու գործակալութիւն:
10. Կրկնուած բաղաձայններ - Բախում - Գութան:
11. Շին Ֆէյնի նախկին զինուորական թեւը - Հնարիչ:
12. Մանրագիր - Կանացի կոչական բառ - Մեծարանք:
13. Էական բառ - Ժխտական պատասխան - Բորբոքում - Ծովեզերեայ լուսաշտարակ:
14. Ապաստան - Իգական, կնոջական:
15. Արամազդի դուստրերէն - Ազատարար - Կրկնուած ձայնաւորներ: